

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

30 դեկտեմբերի 1998 թ.

N 01/60

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 101 հոդվածի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների վերաբերյալ՝ հրահանգչական նամակը՝ համաձայնեցված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ:

ՀՀ հարկային տեսչության պետ

Ս. Այվազյան

*Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների և
էկոնոմիկայի նախարար
_____ Է. Մանդոյան
30 դեկտեմբերի 1998 թ.*

*Հաստատված է
ՀՀ հարկային տեսչության պետ
_____ Ս. Այվազյան
հրաման թիվ 01/06
30 դեկտեմբերի 1998 թ.*

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Չ Ա Կ Ա Ն Ն Ա Մ Ա Կ

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ նաև օրենք) 101 հոդվածը, ինչպես նաև նպատակ ունենալով պարզաբանել վերը նշված օրենքի դրույթներից բխող Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի (եկամտահարկի) և (կամ) ավելացված արժեքի հարկի հաստատագրված վճարներով հարկման որոշ առանձնահատկությունները, Հայաստանի Հանրապետության հարկային տեսչությունը հայտնում է.

1. ՕՐԵՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. Հաստատագրված վճարը ֆիզիկական և իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կողմից պետական բյուջե վճարվող ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին

(եկամտահարկին) փոխարինող պարտադիր և անհատույց վճար է: Ընդ որում, ֆիզիկական անձանց համար հաստատագրված վճարը փոխարինում է ավելացված արժեքի հարկին և (կամ) վերջիններիս կողմից ինքնուրույն կերպով հաշվարկման ենթակա եկամտահարկին:

1.2. Այն դեպքում, երբ հաստատագրված վճար վճարողը հանդիսանում է նաև հարկային գործակալ (մասնավորապես, «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածներով, «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57 հոդվածով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8 հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ հարկի գումարի վճարման աղբյուրում պահելու պարտավորության պայմաններում) և նրա վրա է դրված այլ հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ տրամադրելիս) այդ եկամուտներից հարկերը հաշվարկելու, պահելու (գանձելու) և բյուջե վճարելու պարտականությունը, այդ հարկային պարտավորությունները հաստատագրված վճար վճարողը կատարում է ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով՝ անկախ հաստատագրված վճարներ կատարելու հանգամանքից:

(1.2-րդ կետը փոփ. 02.05.02 N 02/578)

1.3. Հաստատագրված վճարներով հարկվելը չի ազատում սահմանված կարգով հաշվառում (հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ) վարելու, հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով, ժամկետներում և դեպքերում հաշվետվություններ, հաշվեկշիռներ, հայտարարագրեր, այլ փաստաթղթեր ու տեղեկություններ ներկայացնելու պարտականությունից:

Այն դեպքում, երբ հաստատագրված վճար վճարողներն իրականացնում են բացառապես հաստատագրված վճարներով հարկվող օբյեկտ համարվող գործունեություն, ապա այլ տեսակի հարկվող օբյեկտներ չունենալու դեպքում հարկային տեսչության մարմնին շահութահարկի և ավելացված արժեքի հարկի հաշվարկներ չեն ներկայացնում:

1.4. Գործունեության հետևյալ տեսակների՝ խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու, ավտոկանգառների կազմակերպման, արտարժույթի փոխանակման կետերի միջոցով արտարժույթի առք ու վաճառքի, համակարգչային խաղերի կազմակերպման և տեսաժապավենների և տեսամագնիտոֆոնների վարձույթի համար, Երևան քաղաքի և «Զվարթնոց» օդանավակայանի առումով, օրենքով նախատեսված գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցների կիրառման համար հիմք են ընդունվում ՀՀ կառավարության 31.07.98 թ. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 482 որոշմամբ սահմանված ուղղիչ գործակիցները՝ ըստ գոտիականության և գործունեության տեսակի:

Աբովյան, Վաղարշապատ, Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր և Հրազդան քաղաքներում գտնվող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու համար օրենքով նախատեսված գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցների կիրառման համար հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մայիսի 29-ի «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25

հողվածի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 362 որոշմամբ սահմանված ուղղիչ գործակիցները:

(1.4-րդ կետը փոփ., լրաց. 02.05.02 N 02/578)

1.5. Օրենքի 7 հոդվածի «ա», «բ» և «ե»-«թ» ենթակետերում նշված գործունեության տեսակներ իրականացնողները, գործունեության այդ տեսակների ժամանակավոր դադարեցման վերաբերյալ իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին տրվող դիմում-հայտարարությունում (հավելված 1) նշում են գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու ժամանակահատվածը՝ առանց վերադարձնելու ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության իրենց օրինակը:

Այն դեպքերում, երբ գործունեության ժամանակավորապես դադարեցման դիմում-հայտարարության մեջ նշված բոլոր օրերը (ողջ ժամանակահատվածը) գտնվում են այն ժամանակահատվածում, որի համար վճարողի կողմից սահմանված կարգով արդեն իսկ ներկայացված է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը, ապա գործունեությունը վերսկսելիս վերջինիս կողմից ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն կարող է չներկայացվել (բացառությամբ այն դեպքերի, երբ ակնկալվում են ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների այլ բնույթի փոփոխություններ):

Օրինակ 1.1. (Բոլոր օրինակները և նրանցում նշված անվանումները պայմանական են)

«Տիգրան» ՄՊԸ-ն Երևանում ունի 20 մ² առևտրական տարածք (մակերես) ունեցող խանութ: ՄՊԸ-ն իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին օգոստոս-դեկտեմբեր ամիսների համար նախօրոք ներկայացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությամբ տեղեկացրել է, որ խանութը աշխատելու է առանց հանգստյան օրերի: Հոկտեմբեր ամսվա ընթացքում ընկերությունը նախատեսում է խանութում իրականացնել շինվերանորոգման աշխատանքներ՝ այդ ժամանակահատվածում դադարեցնելով առևտրական գործունեությունը:

Տվյալ դեպքում ընկերությունը, նախօրոք (մինչև առևտրական գործունեության դադարեցումը), իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին գործունեության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ դիմում-հայտարարություն է ներկայացնում նշելով գործունեության դադարեցման սկիզբը և ավարտը: Գործունեության վերսկսման հետ կապված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարությունը չի ներկայացնում, քանի որ գործունեության դադարեցման օրերը գտնվում են այն ժամանակահատվածում, որի համար ընկերության կողմից սահմանված կարգով արդեն իսկ ներկայացվել էր ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը և ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների այլ փոփոխություններ չեն նախատեսվել (չեն կատարվել):

(1.5-րդ կետը փոփ. 02.05.02 N 02/578)

1.6. Օրենքի 7 հոդվածի «գ», «դ», «ե», «զ», «է», «զ», «ժ», «ծ», «ժ», «ժ», «ժ», «ժ», «ժ», «ժ» և «ժ» ենթակետերում նշված գործունեության տեսակներ իրականացնողները, գործունեության այդ տեսակների կասեցման (ժամանակավոր դադարեցման) վերաբերյալ, իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացնում են դիմում՝ գործունեությունը կասեցնելու (ժամանակավորապես դադարեցնելու) մասին,

և դիմումի հետ վերադարձնում են նաև ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության իրենց օրինակը:

Այն դեպքերում, երբ գործունեության ժամանակավորապես դադարեցման դիմումում նշված ողջ ժամանակահատվածը գտնվում է այն ժամանակահատվածում, որի համար վճարողի կողմից սահմանված կարգով արդեն իսկ ներկայացված է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը, ապա գործունեությունը վերսկսելիս վերջինիս հարկային տեսչության մարմնի կողմից հետ է վերադարձվում ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ վճարողի օրինակը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ակնկալվում են ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների փոփոխություններ:

(1.6-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

1.7. Դիմում-հայտարարության մեջ միայն գործունեության դադարեցման սկիզբը նշված լինելու դեպքում, գործունեությունը վերսկսելիս, վճարողը գրավոր դիմումի միջոցով նախապես տեղեկացնում է իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին՝ ներկայացնելով ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն: Վճարողի նախկին հայտարարության օրինակը վերադարձվում է հարկային տեսչության մարմնին կամ ոչնչացվում:

1.8. Այն դեպքերում, երբ օրենքի 7 հոդվածի «ա»-«ժզ», «ժը» և «ժթ» ենթակետերում նշված գործունեության տեսակների ժամանակավոր դադարեցման (գործունեության կասեցման) ժամանակահատվածը իր մեջ ներառում է օրենքով նախատեսված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների պարտադիր գրանցման (վերագրանցման) ժամկետ (ժամկետներ), ապա ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների պարտադիր գրանցման (վերագրանցման) ժամկետը համարվում է գործունեության փաստացի վերսկսման նախորդ օրը:

(1.8-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

1.9. Սույն հրահանգչական նամակի դրույթները չեն տարածվում այն վճարողների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է կիրառեն հսկիչ-դրամարկղային մեքենաներ և օրենքի 20-րդ հոդվածի համաձայն չեն համարվի հաստատագրված վճար վճարողներ:

(1.9-րդ կետը լրաց. 02.05.02 N 02/578)

2. ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Առևտրական տարածքը (մակերեսը) հաշվարկվում է քառակուսի մետրերով և, ըստ էության, օրենքի դրույթները տարածվում են 30 քառակուսի մետր մակերեսից ոչ ավելի առևտրական տարածք (մակերես) ունեցող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնողների վրա:

2.2. Հաստատագրված վճարով հարկման ենթակա լինելը որոշելու նպատակով պայմաններն ուսումնասիրվում են օրենքի 22 հոդվածի 2-րդ կետում բերված հաջորդականությամբ.

ա) առանձին շինություն (հիմնական (ստացիոնար) կամ ոչ հիմնական տիպի) լինելու հանգամանքը

բ) այդպիսի շինության մեջ առևտրական գործունեություն իրականացնելու նպատակով համապատասխան տարածքի առկայությունը

գ) այդպիսի առևտրական գործունեություն ծավալելու մասում առևտրական տարածքի 30 քառակուսի մետրը չգերազանցելու հանգամանքը:

Նշված կարգով հաստատագրված վճարներ կատարող խանութի, կրպակի (տաղավարի) որոշակիացումից հետո հաստատագրված վճարը գանձվում է բուն առևտրական գործունեություն իրականացնողից:

Օրինակ 2.1.

Հայաստանի Ջրաշեն գյուղում գտնվող մի շինության մեջ միաժամանակ իրականացվում են կենցաղսպասարկման ծառայություններ, հացաթխում, փոստի ծառայությունների տրամադրում և տեղաբաշխված է սպառողական կոռպորացիայի խանութը: Վերը նշված հաջորդականությունը հաշվի առնելով պետք է ստուգվի խանութի առևտրական տարածքը (մակերեսը): Այն 30 մ² չգերազանցելու դեպքում սպառողական միությունների շրջանային համապատասխան միությունը պետք է սահմանված կարգով վճարի հաստատագրված վճար:

Օրինակ 2.2.

«Արևիկ» ընկերության հանրախանութը տեղաբաշխված է Երևանում, առանձին եռահարկ շենքում: Առևտրական տարածքը կազմում է 600 մ² (յուրաքանչյուր հարկում 200-ական մ²): Տվյալ դեպքում առևտրական գործունեության համար հաստատագրված վճարներ չեն գործի և ընկերությունը իր հարկերը կհաշվարկի և կվճարի ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Նույն պայմաններում, եթե «Արևիկ» ընկերությունը այդ շենքի II և III հարկերը վարձակալությամբ տրամադրի առևտրական գործունեություն իրականացնող այլ տնտեսավարող սուբյեկտների, ապա գործունեության այդ մասով ընկերության վրա տարածվում են օրենքի 3 գլխի դրույթները (կհանդիսանա հաստատագրված վճար վճարող՝ որպես առևտրի իրականացման վայր կազմակերպող):

Ինչ վերաբերում է այդ շենքի II և III հարկերում առևտրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին, ապա վերջիններս իրենց հարկերը կհաշվարկեն և կվճարեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան կարգով:

2.3. Այն դեպքում, երբ հարկ վճարողը իր առևտրական գործունեությունը իրականացնում է տարբեր վայրերում տեղաբաշխված մի քանի խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով, ապա հաստատագրված վճարներով հարկվելու ենթակա լինելը որոշվում է դրանցից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին:

Օրինակ 2.3.

Աբովյանի «Աստղ» ՍՊԸ իր տրամադրության տակ ունի քաղաքի տարբեր մասերում տեղաբաշխված 4 կրպակ, 1 խանութ Երևանում (48 մ² առևտրական մակերեսով) և 2 տաղավար Եղվարդում: Կրպակներից և տաղավարներից յուրաքանչյուրի առևտրական տարածքը չի գերազանցում 30 մ²-ը, թեև դրանց ընդհանուր առևտրական մակերեսի հանրագումարը կազմում է 176 մ²: Տվյալ դեպքում, բացի Երևանի խանութից, բոլոր կրպակների և տաղավարների համար «Աստղ» ՍՊԸ պետք է կատարի հաստատագրված վճարներ:

2.4. Եթե հարկ վճարողը իր առևտրական գործունեությունը իրականացնում է միևնույն վայրում (շենքում, շինությունում, առևտրի իրականացման այլ վայրում)

տեղաբաշխված մի քանի խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով, ապա նա հաստատագրված վճարներով կհարկվի իր ողջ առևտրական տարածքի գումարային մեծությունը 30 մ² չգերազանցելու դեպքում:

Օրինակ 2.4.

Օրինակ 2.2-ում բերված պայմաններում «Արևիկ» ընկերությունը կհանդիսանա հաստատագրված վճար վճարող (իր կողմից զբաղեցրած խանութների, կրպակների (տաղավարների) մասով), եթե իր առևտրական գործունեությունը կհամապատասխանի օրենքի 22 հոդվածի 2-րդ կետի պայմաններին (այսինքն՝ իր գործունեությունը կիրականացնի այդ եռահարկ շենքի ներսում առանձնացված շինություն հանդիսացող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով) և եթե առևտրական գործունեության իրականացման նպատակով իր կողմից զբաղեցրած առևտրական տարածքների հանրագումարը չի գերազանցի 30 քառ. մետրը (ընդ որում, այդ տարածքների հանրագումարում հաշվի են առնվում նաև նույն վայրում տեղաբաշխված, ընկերության կողմից առևտրական գործունեության նպատակով օգտագործվող այլ տարածքները՝ վերջիններիս առկայության դեպքում): Այդ տարածքների հանրագումարը 30 քառ. մետրը գերազանցելու դեպքում ընկերությունը իր կողմից իրականացվող առևտրական գործունեության համար հարկերը կհաշվարկի և կվճարի ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

2.5. Խանութների համար առևտրական տարածքը (մակերեսը) ներառում է առևտրական դահլիճի մակերեսը, որը նախատեսված է ապրանքների ցուցադրման, վաճառքի և գնված ապրանքների գծով լրացուցիչ մանր սպասարկումների համար: Խանութների առևտրական տարածքի (մակերեսի) մեջ չեն ներառվում առևտրական դահլիճից դուրս գտնվող ադմինիստրատիվ, կենցաղային տարածքները, ապրանքների ընդունման, բեռնաթափման, պահեստային և այլ համանման տարածքները: Կրպակների, տաղավարների համար, քանի որ դրանք չունեն առևտրական դահլիճ, որպես առևտրական տարածք հիմք է ընդունվում ընդհանուր մակերեսը: Առևտրական ցանցի հաշվառման գործող կանոնների համաձայն, որոշակի դեպքերում տաղավարների մեջ առևտրական դահլիճի առանձնացման դեպքում հիմք է ընդունվում խանութների համար նախատեսվող առևտրական մակերեսը:

Օրինակ 2.5.

Երևանից «Զվարթնոց» օդանավակայան տանող Վաղարշապատի խճուղու վրա տեղաբաշխված է խանութ, որի առևտրական տարածքը 20 մ² է: Միաժամանակ խանութի սեփականատեր անհատական ձեռնարկությունը խանութի դիմաց, անմիջականորեն մուտքի մոտ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված (ըստ էության նույն առևտրի կետում, որի համար վարվում է մեկ միասնական ընդհանուր ապրանքների և դրանց գների (հասույթների) գրանցման (հաշվառման) գիրք) 8 մ² տարածքի վրա ևս իրականացնում է առևտրական գործունեություն:

Քանի որ առևտրական գործունեության իրականացման համար օգտագործվող առևտրական տարածքը (մակերեսը) չի գերազանցում 30 մ²-ին (28 մ²), ուստի ձեռնարկությունն առևտրական տարածքի 28 մ²-ի համար կատարում է հաստատագրված վճար՝ օրենքով սահմանված չափով և ժամկետներում:

Նույն պայմաններում, եթե անմիջականորեն խանութի մուտքի մոտ առևտրական գործունեությունն իրականացվում է ոչ թե 8 մ²-ի միջոցով, այլ օրինակ 12 մ²-ի միջոցով,

ապա վերը նշված անհատական ձեռնարկությունը հաստատագրված վճարներ կատարող չի հանդիսանում: Հարկերը հաշվարկվում և վճարվում են ընդհանուր սահմանված կարգով:

Օրինակ 2.6.

Կիևյան փողոցի վրա տեղաբաշխված 10 մ² մակերես ունեցող կրպակի սեփականատեր անհատ ձեռներեցը նաև կրպակին անմիջականորեն հարող (ըստ էության իրեն տրամադրված) 5 մ² տարածքի վրա իրականացնում է առևտրական գործունեություն և սահմանված կարգով կատարում հաստատագրված վճար՝ 15 մ² հաշվով:

Հետագայում այդ անհատ ձեռներեցը վերը նշված 5 մ² տարածքը վարձակալական պայմանագրով տրամադրում է այլ տնտեսավարող սուբյեկտի:

Տվյալ դեպքում անհատ ձեռներեցը հաստատագրված վճար կատարում է՝ ելնելով փաստացի օգտագործվող 10 մ²-ից, իսկ այլ տնտեսավարող սուբյեկտը 5 մ² տարածքում իրականացվող առևտրական գործունեության համար հարկերը վճարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան կարգով:

2.6. Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՀՎ = \text{Պ} \times \text{ԱՏ} \times \text{Օ}_p \times \text{Գ} \times \text{ԼԳ}_1 \times \text{ԼԳ}_2 \times \text{Ա որտեղ՝}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցների արտադրյալի բազմապատիկ

մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

ԱՏ - քառակուսի մետրերով արտահայտված առևտրական տարածքը,

Օ_p - ամսվա ընթացքում առևտրական գործունեության իրականացման օրացուցային օրերի թիվն է,

Գ - գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է,

ԼԳ₁ - աղետի գոտում, հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գտնվող գյուղերի համար

կիրառվող լրացուցիչ (0.8) ուղղիչ գործակիցն է,

ԼԳ₂ - բացառապես նկուղային հարկերում տեղադրված խանութների, կրպակների (տաղավարների)

համար կիրառվող լրացուցիչ (0.8) ուղղիչ գործակիցն է,

Ա - 1999 թվականի ապրիլ ամսից սկսած (օրենքի 97 հոդվածի համաձայն) յուրաքանչյուր 12-ամսյա

ժամանակահատվածի համար հաստատագրված վճարի ամսական չափի և սահմանային չափերի

նկատմամբ կիրառվող, նախորդ տարվա ընթացքում արձանագրված սպառողական գների

փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է Հայաստանի

Հանրապետության հարկային տեսչության կողմից:

(2.6-րդ կետը փոփ. 02.05.02 N 02/578)

2.7. Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեության համար օրենքով նախատեսված է սահմանային չափ՝ հարկ վճարողների կողմից եռամսյակի ընթացքում (անկախ գործունեության իրականացման օրերի թվից) առևտրական տարածքի 1 մ² հաշվով ապրանքաշրջանառության ծավալը 310 հազ. դրամը գերազանցելու դեպքում վերջիններս տվյալ եռամսյակի համար հարկերը կվճարեն ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Օրինակ 2.7.

«Արամ» ՍՊԸ Վաղարշապատում ունի 26 մ² առևտրական տարածք (մակերես) ունեցող խանութ և մի կրպակ՝ 6 մ² տարածքով (մակերեսով) Վաղարշապատի շրջանի Առատաշեն գյուղում: «Արամ» ՍՊԸ-ն հաշվառման վայրի հարկային տեսչության մարմինն ներկայացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությամբ տեղեկացրել է, որ Վաղարշապատի խանութի համար չեն նախատեսված հանգստյան օրեր, իսկ Առատաշեն գյուղում գտնվող կրպակը չի աշխատելու շաբաթ և կիրակի օրերին (հուլիս ամսին՝ 8 օր, օգոստոսին՝ 10 օր, սեպտեմբերին՝ 8 օր): 1998թ. հուլիս-օգոստոս-սեպտեմբեր ամիսների համար անկախ տվյալ եռամսյակի իրացման շրջանառությունից, կատարվում է հաստատագրված վճարի մոծում հետևյալ չափերով.

ա) Վաղարշապատ քաղաքի խանութի համար.

-հուլիս ամսվա համար՝ $Z\text{Վ} = \text{ՄՆ}U_{2.5\%} \times \text{ԱՏ} \times \text{Գ} \times \text{Օր} = 25 \times 26\text{մ}^2 \times 1.0 \times 31_{\text{օր}} = 20150$ դրամ (համաձայն ՀՀ կառավարության 03.06.97թ. N166 որոշմամբ հաստատված կարգի, քանի որ օրենքն ուժի մեջ է մտել 1998թ. օգոստոսի 1-ից),

-օգոստոս ամսվա համար՝ $Z\text{Վ} = \text{Պ} \times \text{ԱՏ} \times \text{Օր} \times \text{Գ} \times \text{U} = 32 \times 26\text{մ}^2 \times 31_{\text{օր}} \times 1,2^* \times 1.0 = 30950,4$ դրամ,

-սեպտեմբեր ամսվա համար՝ $Z\text{Վ} = 32 \times 26\text{մ}^2 \times 30_{\text{օր}} \times 1,2 \times 1.0 = 29952$ դրամ:

բ) Առատաշեն գյուղի կրպակի համար.

-հուլիս ամսվա համար՝ $Z\text{Վ} = \text{ՄՆ}U_{2.5\%} \times \text{ԱՏ} \times \text{Գ} \times \text{Օր} = 25 \times 6\text{մ}^2 \times 0.5 \times 23_{\text{օր}} = 1725$ դրամ (համաձայն ՀՀ կառավարության 03.06.97թ. N166 որոշմամբ հաստատված կարգի),

-օգոստոս ամսվա համար՝ $Z\text{Վ} = \text{Պ} \times \text{ԱՏ} \times \text{Օր} \times \text{Գ} \times \text{L}\text{Գ}_3 \times \text{U} = 32 \times 6\text{մ}^2 \times 21_{\text{օր}} \times 0,5^{**} \times 0.7^{***} \times 1.0 = 1411,2$ դրամ,

-սեպտեմբեր ամսվա համար՝ $Z\text{Վ} = 32 \times 6\text{մ}^2 \times 22_{\text{օր}} \times 0,5 \times 0.7 \times 1.0 = 1478,4$ դրամ,

* Համաձայն օրենքի 25 հոդվածի 1-ին կետի վերջին մասի, մինչև ՀՀ կառավարության կողմից սահմանելը, ընդունվում է նույն հոդվածի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետով նախատեսված ուղղիչ գործակիցի առավելագույն չափը:

** Համաձայն օրենքի 25 հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի:

*** Համաձայն օրենքի 25 հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի:

Եռամսյակն ավարտվելուց հետո ընկերությունը օրենքի 13 հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին է ներկայացնում սահմանային չափերի ցուցանիշների վերաբերյալ հայտարարությունները (խանութի և կրպակի համար առանձին-առանձին)՝ ՀՀ հարկային տեսչության կողմից հաստատված ձևերով, որոնցում կատարված հաշվարկներից պարզվում է, որ Վաղարշապատի խանութի ապրանքաշրջանառության ծավալը եռամսյակի համար կազմել է 7254,0 հազ. դրամ: Քանի որ տվյալ դեպքում

եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալը 1 քառ. մետրի հաշվով կազմում է 279,0 հազ. դրամ (չի գերազանցում օրենքի 22 հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված սահմանային չափը), ուստի՝ որևէ վերահաշվարկ խանութի առումով չի կատարվում և շահութահարկի և ԱԱՀ-ի հարկային պարտավորություններն այդ եռամսյակի համար կազմում են հաստատագրված վճարի գումարի չափը:

Առատաշեն գյուղի կրպակին վերաբերող հաշվարկները ցույց են տալիս, որ վերջինիս ապրանքաշրջանառությունը եռամսյակի համար կազմել է 2736,0 հազ. դրամ: Քանի որ 1 մ²-ի հաշվով եռամսյակի ընթացքում ապրանքաշրջանառության ծավալը գերազանցել է սահմանային չափը (կազմել է 342,0 հազ. դրամ), ուստի՝ կրպակի միջոցով իրականացված առևտրական գործունեության մասով ՄՊԸ հարկերը կվճարի ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով: Տվյալ դեպքում, անցած եռամսյակի համար վճարված 4614,6 (1725 + 1411,2 + 1478,4) դրամ հաստատագրված վճարների գումարը ենթակա է հաշվանցման հետևյալ կերպ.

- 1998թ. հուլիս ամսվա համար՝ 690 դրամը (1725 դրամի 40%-ը) ԱԱՀ-ի և 1035 դրամը (1725 դրամի 60%-ը) շահութահարկի գծով հարկային պարտավորությունների դիմաց (ՀՀ կառավարության 03.06.97թ. N166 որոշմամբ հաստատված կարգի համաձայն):
- օգոստոս - սեպտեմբեր ամիսների համար՝ 1733,8 դրամը (1411,2 դրամ + 1478,4 դրամ = 2889,6 դրամի 60%-ը) ԱԱՀ-ի և 1155,8 դրամը (2889,6 դրամի 40%-ը) շահութահարկի գծով հարկային պարտավորությունների դիմաց (օրենքի 16 հոդվածի համաձայն):

Հաջորդ ամիսների համար ընկերությունն ամեն դեպքում կատարում է հաստատագրված վճարներ՝ հաջորդ եռամսյակի արդյունքներով, նորից վերը նշված կարգով կատարելով համեմատություն:

2.8. Այն վճարողները, որոնց ապրանքաշրջանառության ծավալը հաշվետու ժամանակաշրջանի համար կգերազանցի օրենքով նախատեսված սահմանային չափը, և որոնք իրենց հարկային պարտավորությունները կկրեն ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով՝ կարող են իրականացնել ավելացված արժեքի հարկի մասով հաշվապահական ձևակերպումների ճշգրտում՝ ճշտանցման (ստորնոյի) եղանակով:

Օրինակ 2.8

«Նուբար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Երևան քաղաքի կենտրոնական մասում գտնվող (ուղղիչ գործակիցը՝ 2,75) 21 մ² առևտրական տարածք ունեցող խանութի ապրանքաշրջանառությունը եռամսյակի համար կազմել է 6920,0 հազ. դրամ: Քանի որ 1 մ²-ի հաշվով եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալը գերազանցել է օրենքով նախատեսված սահմանային չափը՝ 310 հազ. դրամը (կազմել է 329,5 հազ. դրամ (6920,0 հազ. դրամ: 21 մ² = 329,5 հազ. դրամ)), ապա խանութի միջոցով իրականացվող առևտրական գործունեության մասով ընկերությունը այդ եռամսյակի համար հարկերը կվճարի ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, իսկ վճարված 170,0 հազ. դրամ հաստատագրված վճարի գումարը (57,3 հազ. դրամ + 55,4 հազ. դրամ + 57,3 հազ. դրամ = 170,0), օրենքի 16 հոդվածի համաձայն, ենթակա է հաշվանցման, ընդ որում՝ 102,0 հազ. դրամը (170,0 հազ. դրամի 60%-ը) ԱԱՀ-ի և 68,0 հազ. դրամը (170,0 հազ. դրամի 40%-ը) շահութահարկի գծով հարկային պարտավորությունների դիմաց (օրենքի 6 հոդվածով սահմանված համամասնությամբ):

Տվյալ եռամսյակում խանութի միջոցով իրականացված առևտրական գործունեությունից ստացված հասույթից, ընկերությունը 16,67% հաշվարկային դրույքաչափով հաշվարկում է ԱԱՀ՝ կատարելով հետևյալ հաշվապահական ձևակերպումը.

Դտ 50	Կտ 46	6920,0 հազ. դրամ.
Դտ 46	Կտ 68/3	1153,6 հազ. դրամ:

Ավելացված արժեքի հարկի մասով (102,0 հազ. դրամ) կատարվում է եռամսյակի համար հաստատագրված վճարի հաշվարկման հաշվապահական ձևակերպումների ճշգրտում՝ ճշտանցման (ստորնոյի) եղանակով.

Դտ 80 Կտ 68 102,0 հազ. դրամ. (կարմիր «ստորնո»):

Ընդունենք, որ այդ եռամսյակում իրացված ապրանքների արժեքը ձեռք բերման գներով կազմել է 4320,0 հազ. դրամ, այդ թվում ԱԱՀ-ը կազմում է 720,0 հազ. դրամ:

Դտ 68/3 Կտ 41 720 հազ. դրամ

Տվյալ եռամսյակում շրջանառության ծախսերը (էլ. էներգիայի, ջրամատակարարման և այլն) կազմել են 120,0 հազ. դրամ, այդ թվում մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարը՝ 20,0 հազ. դրամ:

Դտ 68/3 Կտ 44 20,0 հազ. դրամ

Տվյալ եռամսյակի բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը կկազմի 311,6 հազ. դրամ (1153,6-720,0-20,0-102,0 = 311,6 հազ. դրամ):

2.9. Եռամսյակի ընթացքում խանութի, կրպակի (տաղավարի) ելակետային տվյալ հանդիսացող առևտրական տարածքի փոփոխության դեպքում սահմանային չափի գերազանցումը հաշվարկելիս եռամսյակի համար հիմք է ընդունվում կշռված միջինի միջոցով հաշվարկված առևտրական տարածքը (մակերեսը), որը որոշվում է գործունեության իրականացման օրերի թվին համապատասխան:

Օրինակ 2.9.

4 մ² մակերես ունեցող կրպակի միջոցով առևտրական գործունեություն իրականացնող անհատ ձեռներեցը իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացրած ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունով 1998 թ. 3-րդ եռամսյակի համար գործունեության իրականացման օրերի թիվը, ըստ ամիսների, հայտարարել է հետևյալ կերպ.

- հուլիս ամսվա համար՝ 27 օր,
- օգոստոս ամսվա համար՝ 26 օր,
- սեպտեմբեր ամսվա համար՝ 26 օր:

Սեպտեմբերի 1-ից, անհատ ձեռներեցը, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն ներկայացնելու միջոցով, կրպակի մակերեսն ավելացրել է 2 մ²-ով (դարձել է 6 մ²): Տվյալ եռամսյակի համար սահմանային չափի գերազանցումը հաշվարկելիս անհատ ձեռներեցը ըստ գործունեության իրականացման օրերի թվի միջին կշռված առևտրական տարածքը (մակերեսը) հաշվարկում է հետևյալ կերպ.

$$US = \frac{4 \times (27_{օր} + 26_{օր}) + 6 \times 26_{օր}}{27_{օր} + 26_{օր} + 26_{օր}} = 4,7 \text{ մ}^2:$$

2.10. Հաշվետու եռամսյակի արդյունքներով խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեության համար օրենքով նախատեսված են լրացուցիչ ուղղիչ գործակիցներ, կապված.

- օրենքով ավելացված արժեքի հարկից ազատված ապրանքատեսակների վաճառքից ստացված հասույթը (ապրանքաշրջանառությունը) ողջ հասույթի

(ապրանքաշրջանառության) 50 տոկոսը գերազանցելու հանգամանքի հետ,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, առանց մաքսային մարմիններում ավելացված արժեքի հարկը վճարելու վճարողի կողմից Հայաստանի

Հանրապետություն ներմուծված ապրանքների վաճառքից ստացված հասույթի (ապրանքաշրջանառության) տեսակարար կշիռը ողջ հասույթի

(ապրանքաշրջանառության) 50 տոկոսը գերազանցելու հանգամանքի հետ:

Հարկային տեսչության մարմին ներկայացվող սահմանային չափերի ցուցանիշների վերաբերյալ հայտարարությունում (համապատասխան տողերում) արտացոլման են ենթակա սույն կետում բերված համամասնությունները հաշվարկելու համար անհրաժեշտ տվյալները: Հաշվետու եռամսյակի համար նշված համամասնությունները գերազանցելու դեպքում տվյալ եռամսյակի համար հաշվարկված հաստատագրված վճարի մեծությունը վերահաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՀՎ_i = ՀՎ \times LԳ_4 \times LԳ_5 \text{ որտեղ`}$$

- Վ_i - հաշվետու եռամսյակի համար հաշվարկված (վերահաշվարկված) հաստատագրված վճարի չափն է,
- Վ - հաշվետու եռամսյակի ամիսների համար հաշվարկված հաստատագրված վճարների գումարային մեծությունն է,
- Գ₄ - օրենքով ԱԱՀ-ից ազատված ապրանքատեսակների վաճառքից ստացված հասույթը (ապրանքաշրջանառությունը) ողջ հասույթի (ապրանքաշրջանառության) 50 տոկոսը (սահմանային չափը) գերազանցելու հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակիցն է,
- Գ₅ - առանց մաքսային մարմիններում ավելացված արժեքի հարկը վճարելու վճարողի կողմից ՀՀ ներմուծված ապրանքների վաճառքից ստացված հասույթի (ապրանքաշրջանառության) տեսակարար կշիռը ողջ հասույթի (ապրանքաշրջանառության) 50 տոկոսը (սահմանային չափը) գերազանցելու հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակիցն է:

2.11. 1998 թ. օգոստոսի 1-ից հաստատագրված վճար վճարողներ են հանդիսանում նաև առևտրի իրականացման վայրերում (տոնավաճառ, շուկա և այլն) տեղադրված 30 մ² մակերեսից ոչ ավելի առևտրական տարածք ունեցող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնողները:

2.12. Սեփական արտադրության արտադրանքի վաճառահանման կետերում, դեղատներում, գազի վաճառքի կետերում, մամուլի կրպակներում համապատասխանաբար սեփական արտադրության արտադրանքից, դեղանյութերից, դեղամիջոցներից և բժշկական այլ պարագաներից, գազից, թերթերից, հանդեսներից, փաստավավերագրերից, տեղեկագրերից, պարբերականներից բացի այլ ապրանքների վաճառք իրականացնողները վճարում են նաև հաստատագրված վճար, եթե հաշվետու

եռամսյակի արդյունքներով ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում այդ «այլ ապրանքների» վաճառքից ստացված հասույթի (ապրանքաշրջանառության) տեսակարար կշիռը ողջ հասույթի (ապրանքաշրջանառության) մեջ գերազանցում է 10, իսկ մամուլի կրպակներում՝ 50 տոկոսը:

Անկախ «այլ ապրանքների» վաճառքից ստացված հասույթի 10 (կամ մամուլի կրպակներում 50) տոկոս տեսակարար կշիռը գերազանցելու փաստից, ՀՀ տարածքում գործող բոլոր այդ հարկ վճարողները (սեփական արտադրության արտադրանքն ինքնուրույնաբար իրացնողները, դեղատները, գազի վաճառքի կետերը և մամուլի կրպակները) լրացնում և հաշվետու եռամսյակի ավարտից հետո (մինչև հաջորդող ամսվա 25-ը ներառյալ) հարկային տեսչության մարմին են ներկայացնում ՀՀ հարկային տեսչության կողմից սահմանված «Տեղեկանքը», որում արտացոլված տվյալների համաձայն կորոշվի (կպարզվի) տվյալ հարկ վճարողի հաստատագրված վճարով հարկման ենթակա լինել կամ չլինելը:

Օրինակ 2.10.

«Արսեն» ՍՊԸ Վանաձորում ունի 18 մ² առևտրական տարածք (մակերես) ունեցող դեղատուն, որում բացի դեղանյութերից, դեղամիջոցներից և բժշկական այլ պարագաներից իրականացվում է նաև այլ ապրանքների վաճառք:

Եռամսյակն ավարտվելուց հետո ընկերությունը օրենքի 13 հոդվածի 5-րդ կետով սահմանված ժամկետում իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին է ներկայացնում ապրանքաշրջանառության համամասնությունների մասին տեղեկանքը՝ ՀՀ հարկային տեսչության կողմից հաստատված ձևերով, որում կատարված հաշվարկից պարզվում է, որ դեղատան համար տվյալ (հաշվետու) եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալի մեջ այլ ապրանքների վաճառքից ստացված հասույթի տեսակարար կշիռը կազմել է 14,3 տոկոս:

Քանի որ տեղի է ունեցել օրենքի 22 հոդվածի 4-րդ կետով սահմանված համամասնության գերազանցում, ապա այդ եռամսյակի համար «Արսեն» ընկերությունը կվճարի նաև հաստատագրված վճար: Հաստատագրված վճարի մեծությունը հաշվարկվում է համաձայն սույն հրահանգի 2.6. կետում բերված բանաձևի, ընդ որում, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը ընկերության կողմից, օրենքով սահմանված կարգով, հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացրած չլինելու դեպքում, բանաձևում

- ԱՏ - ընդունվում է փաստացի զբաղեցրած առևտրական տարածքը,
- Օր - ընդունվում է հաշվետու եռամսյակի օրացուցային օրերի թվին

հավասար:

¹ դեղանյութեր, դեղամիջոցներ և բժշկական այլ պարագաներ հանդիսանալը որոշվում է հիմք ընդունելով «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի համապատասխան հրահանգը:

2.13. Այն բնակավայրերի համար, որոնք գտնվում են աղետի գոտում և (կամ) հանդիսանում են հեռավոր և սահմանամերձ բնակավայրեր, գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցներից կիրառվում է օրենքի 25 հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված 0,5 մեծության ուղղիչ գործակիցը, իսկ նրանցում գտնվող գյուղերի համար կիրառվում է նաև լրացուցիչ 0,8 ուղղիչ գործակիցը:

2.14. Խանութի, կրպակի (տաղավարի) համար օրենքի 25 հոդվածի 3-րդ կետով նախատեսված լրացուցիչ ուղղիչ գործակիցը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ

վերջինիս ողջ առևտրական տարածքը տեղադրված (տեղակայված) է բացառապես նկուղային հարկերում (առաստաղի վերին կետը գտնվում է գետնի մակերեսից ցածր):

Օրինակ 2.11.

Երևանի «Արման» փակ բաժնետիրական ընկերությունը Արուսյան քաղաքի բնակելի շենքի նկուղային հարկում ունի 17 մ2 առևտրական տարածք ունեցող խանութ, որի առաստաղի վերին կետը գտնվում է գետնի մակերեսից 0,1 մետր ցածրության վրա: Խանութը աշխատում է առանց հանգստյան օրերի: Տվյալ դեպքում, խանութի միջոցով իրականացվող առևտրական գործունեության համար հաստատագրված վճարի ամսական չափը 1998թ. սեպտեմբեր ամսվա համար կկազմի.

$$ՀՎ = \mathcal{N} \times \mathcal{U}S \times \mathcal{O}p \times \mathcal{F} \times L \mathcal{F}_2 \times \mathcal{U} = 32 \times 17 \text{մ}^2 \times 30 \text{օր} \times 1,2 \times 0,8 \times 1,0 = 15667,2 \text{ դրամ}$$

Օրինակ 2.12.

Արուսյանի «Հասմիկ» բաց բաժնետիրական ընկերությունը Երևան քաղաքում իրականացնում է առևտրական գործունեություն երկու հարկ զբաղեցնող խանութի միջոցով, որի 28 մ² ընդհանուր առևտրական տարածքի մի մասը (20 մ² առևտրական տարածք ունեցող մեկ դահլիճը) գտնվում է շենքի նկուղային հարկում: Տվյալ խանութը բացառապես նկուղային չի համարվի և հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս բացառապես նկուղային հարկերում տեղադրված լինելու հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակից (L_Գ) չի կիրառվի՝ անկախ խանութի ոչ նկուղային մասում գործունեության իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

3. ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3.1. Առևտրի իրականացման վայրի քառակուսի մետրով արտահայտված ընդհանուր մակերեսը (տարածքը) այն մակերեսն է, որն ըստ էության որոշակիորեն առանձնացված (հատկացված) է և (կամ) փաստորեն օգտագործվում է առևտրի իրականացման վայր կազմակերպելու համար: Ընդհանուր մակերեսը ներառում է փաստացի օգտագործվող մակերեսը ու անմիջականորեն առևտրի հետ կապված և առևտրի իրականացմանն օժանդակող շինությունների, սարքավորումների զբաղեցրած մակերեսները (մասնավորապես՝ անցուղիների, պահեստների, աստիճանների, աստիճանահարթակների, սառնարանների, պահարանների, հիգիենայի սենյակների, հանդերձարանների, սանհանգույցների և այլն):

Փաստացի օգտագործվող մակերեսը (տարածքը) ներառում է առևտրի իրականացման վայրի գործունեություն կազմակերպողի կողմից առևտուր իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հատկացված տարածքը: Ընդ որում, կազմակերպչի կողմից հատկացված տարածքի մակերեսը չի կարող փոքր լինել այդ անձանց կողմից փաստացի զբաղեցրած (օգտագործվող) տարածքի մակերեսից:

Հաստատագրված վճարի հաշվարկման համար անմիջականորեն առևտրի հետ կապված և առևտրի իրականացմանն օժանդակող մակերեսները ներառելու համար փաստացի օգտագործվող մակերեսի նկատմամբ կիրառվում է 1.2 գործակից:

(3.1-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

3.2. Կրպակաշարերի և համանման այլ վայրերի կազմակերպումը դիտարկվում է որպես առևտրի իրականացման վայրի կազմակերպում, եթե առևտրի իրականացման

վայրի կազմակերպման նպատակով է կատարվել այդ տարածքների տրամադրումը (հատկացումը) կազմակերպչին (մասնավորապես տեղական ինքնակառավարման մարմնի կողմից): Այլ դեպքում առևտրի իրականացման վայրի կազմակերպում դիտարկելու համար անհրաժեշտ է կողմնորոշվել՝ ելնելով աշխատանքների իրականացման մասշտաբներից, պարբերականությունից, կազմակերպչի կողմից այլ անձանց համար առևտրի կազմակերպման գործառույթներ ըստ էության իրականացնելուց և տարածքը որոշակիորեն առանձնացված լինելու հանգամանքից:

3.3. Անկախ առևտրի իրականացման վայրի հողի (գույքի) օգտագործման ձևից (մասնավորապես, ՀՀ կառավարության, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարձակալություն, սեփական հողատարածքի, գույքի օգտագործում) առևտրի իրականացման վայր կազմակերպողները հաստատագրված վճարները հաշվարկում են օրենքի 3 գլխի դրույթներին համապատասխան:

3.4. Այն դեպքում, երբ առևտրի իրականացման վայրերում առևտուրն իրականացվում է նաև ավտոմեքենաների միջոցով (վրայից), ապա այդ ավտոմեքենաների զբաղեցրած մակերեսները (տարածքները) ևս ներառվում են առևտրի իրականացման վայրի մակերեսի (տարածքի) մեջ:

3.5. Առևտրական դահլիճ ունեցող մշտական շինություններում գտնվող տարածքներում առևտրի իրականացման վայրերի համար փաստացի օգտագործվող մակերեսի նկատմամբ կիրառվում է նաև 0.7 գործակից: Մույն հրահանգի կիրառման առումով առևտրական դահլիճ ունեցող մշտական (հիմնական) շինություն է համարվում կրող, պարփակող կամ համակցված (կրող և պարփակող) կոնստրուկցիաներից կազմված փակ ծավալ կազմող շինարարական համակարգը, որն օգտագործվում է առևտրի իրականացման վայր կազմակերպելու համար:

Մինևույն վայրում (հասցեում) առևտրական դահլիճ ունեցող մշտական շինությունում և միաժամանակ այդ շինությունից դուրս (ոչ մշտական շինություն) առևտրի իրականացման վայր կազմակերպելու դեպքում՝ կազմակերպիչը փաստացի օգտագործվող մակերեսները (տարածքները) հաշվառում է առանձին:

Օրինակ 3.1

Աբովյանում կազմակերպությունը, իրեն տրամադրված տարածքում կազմակերպում է տոնավաճառ (առևտրի իրականացման վայր): Կազմակերպության կողմից տոնավաճառի կազմակերպման համար առևտրական գործունեություն իրականացնողներին հատկացվել է 800 քառ. մետր տարածք (փաստացի օգտագործվող մակերես), որից 500 քառ. մետր տարածքը՝ առևտրական դահլիճ ունեցող մշտական շինությունում: Կազմակերպության կողմից իր հաշվառման վայրի տարածքային հարկային տեսչություն ներկայացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության մեջ առանձին-առանձին նշվում են առևտրական դահլիճ ունեցող մշտական շինությունում և շինության հարակից տարածքում հատկացված փաստացի օգտագործվող մակերեսները: Հաստատագրված վճարի հաշվարկման համար փաստացի օգտագործվող մակերեսների (300 քառ. մետր և 500 քառ. մետր) նկատմամբ կիրառվում է 1.2 գործակից, իսկ 0.7 գործակիցը կիրառվում է միայն առևտրական դահլիճ ունեցող մշտական շինությունում հատկացված փաստացի օգտագործվող մակերեսի (500 քառ. մետր) նկատմամբ:

(3.5-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

3.6. Առևտրի իրականացման վայրի տարածքը, որպես այդպիսին որոշակիորեն առանձնացված չլինելու, ինչպես նաև տարածքի սահմանները կազմակերպչի կողմից գերազանցելու դեպքում, որպես առևտրի իրականացման վայրի տարածք դիտարկվում է այն տարածքը, որտեղ փաստորեն կազմակերպչի կողմից իրականացվում է առևտրի կազմակերպումը:

3.7. Առևտրի կազմակերպումը շաբաթվա տարբեր օրերին առևտրի իրականացման վայրի տարբեր տարածքներում (մասերում) ծավալելու դեպքում կազմակերպչի կողմից յուրաքանչյուր տարածքի համար վարվում է առանձին հաշվառում:

Օրինակ 3.2.

Երևանի տարածքում կազմակերպությունը իրավասու մարմնի կողմից իրեն տրամադրված հողատարածքում, կազմակերպում է տոնավաճառ: Տրամադրված տարածքի ընդհանուր մակերեսը 8000 քառ. մետր է, որից կազմակերպության կողմից առայժմ 1700 քառ. մետրն է առանձնացվել (հատկացվել) առևտրի իրականացման վայրի կազմակերպչու համար (ներառյալ օժանդակող շինությունները և այլն), ընդ որում, փաստացի օգտագործվող մակերեսը կազմում է 1200 քառ. մետր: Կազմակերպությունը առևտուր է կազմակերպում տարբեր աշխատանքային ռեժիմներով՝ տոնավաճառը որոշակիորեն բաժանելով երկու տարբեր տարածքների: Առաջին տարածքում (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 800 քառ. մետր) առևտուր է կազմակերպվում միայն շաբաթ և կիրակի օրերին, իսկ երկրորդ տարածքում (փաստացի օգտագործվող մակերեսը 400 քառ. մետր)՝ շաբաթվա բոլոր օրերին (այդ թվում նաև շաբաթ և կիրակի): Յուրաքանչյուր տարածքում առևտրի իրականացման վայրի կազմակերպումը դիտարկվում է առանձին-առանձին՝ որպես տարբեր տարածքներում առևտրի կազմակերպման գործունեություն: Տվյալ դեպքում կազմակերպությունը հարկային տեսչությանը ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ 2 հայտարարություն է ներկայացնում և հաստատագրված վճարների հաշվարկները կատարում է յուրաքանչյուր փաստացի օգտագործվող տարածքի համար առանձին-առանձին:

(Օրինակ 3.2-ը խմբ. 02.05.02 N 02/578)

3.8. Այն դեպքում, երբ կազմակերպիչը հանդիսանում է նաև առևտուր իրականացնող (իր (հատկացված) տարածքներում (տեղերում) ինքը ևս իրականացնում է առևտուր), ապա առևտրի իրականացման վայրի այդ տարածքների մասով առևտրի իրականացման վայրի կազմակերպման համար սահմանված հաստատագրված վճարներ չեն գործում: Կազմակերպչի կողմից այդ տարածքում առևտուր իրականացնելու համար հարկերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իր առևտրական գործունեությունը նա իրականացնում է այդ նույն վայրում տեղաբաշխված խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով և իր ողջ առևտրական տարածքի գումարային մեծությունը չի գերազանցում 30 մ² (այսինքն՝ համապատասխանում է օրենքի 2 գլխի դրույթներին): Գործունեության մի քանի տեսակ իրականացնելու դեպքում իրականացվում է եկամուտների և ծախսերի առանձնացված հաշվառում:

3.9. Առևտրի իրականացման վայր կազմակերպողների կողմից յուրաքանչյուր ամսվա համար հարկային տեսչության մարմնին նախօրոք հայտարարված առևտրի իրականացման վայրի մակերեսին (տարածքին) վերաբերող ելակետային տվյալները

ամսվա ընթացքում (այդ ամսվա համար) նվազեցման ենթակա չեն, բացառությամբ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերի:

(3.9-րդ կետը լրաց. 02.05.02 N 02/578)

3.10. Հաստատագրված վճարի ամսական չափը առևտրի իրականացման վայրի (տոնավաճառ, շուկա և այլ) կազմակերպչի համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՀՎ} = \text{Պ} \times \text{ՓՄ} \times \text{Օր} \times \text{Գ}_1 \times \text{Գ}_2 \times \text{Գ}_3 \times \text{Ա}, \text{ որտեղ } \text{՝}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակցի արտադրյալի բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

ՓՄ - առևտրի իրականացման վայրի քառակուսի մետրով արտահայտված փաստացի օգտագործվող մակերեսն է,

Օր - ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերի թիվն է,

Գ₁ - գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է,

Գ₂ - անմիջականորեն առևտրի հետ կապված և առևտրի իրականացմանն օժանդակող մակերեսների հաշվառման գործակիցն է,

Գ₃ - առևտրական դահլիճ ունեցող մշտական շինություններում առևտրի իրականացման վայր կազմակերպողների համար կիրառվող գործակիցն է,

Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից:

(3.10-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

3.11. Վճարողները, յուրաքանչյուր ամսվա արդյունքներով, օրենքով սահմանված ժամկետներում, իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացնում են ՀՀ հարկային տեսչության կողմից սահմանված ձևի հայտարարություն՝ սահմանային չափերի հաշվարկման ցուցանիշների վերաբերյալ: Կազմակերպչի կողմից տվյալ ամսվա համար գանձվող վճարների գումարներն առևտրի իրականացման վայրի 1 մ² հաշվով այդ ամսվա համար վճարվող (հաշվարկված) հաստատագրված վճարի մեծության հնգապատիկը գերազանցելու դեպքում, հաստատագրված վճարի մեծության նկատմամբ լրացուցիչ կիրառվում է 2,0 ուղղիչ գործակից (օրենքի 31 հոդվածի 2-րդ կետ):

Տվյալ սահմանային չափը գերազանցելու դեպքում ամսվա համար վճարվող (հաշվարկված) հաստատագրված վճարի չափը ճշգրտվում է ՀՎ x ԼԳ բանաձևով, որտեղ ԼԳ - լրացուցիչ ուղղիչ գործակիցն է:

Օրինակ 3.3.

Օրինակ 3.2-ում նշված կազմակերպությունը օգոստոս ամսվա ընթացքում առաջին տարածքում (800 քառ. մետր) առևտուր է կազմակերպել 10 օր, իսկ երկրորդ տարածքում (400 քառ. մետր)՝ 31 օր: Կազմակերպչի կողմից առևտուր իրականացնողներին տարածքներ (տեղեր) տրամադրելիս վերջիններից գանձված վճարների գումարները կազմել են.

- առաջին տարածքի համար՝ 7500,0 հազ. դրամ,

- երկրորդ տարածքի համար՝ 5600,0 հազ. դրամ:

Տվյալ ամսվա համար դրանց մեծությունը 1 մ² հաշվով կկազմի համապատասխանաբար՝

- 9375 դրամ (7500,0 հազ. դրամ: 800 = 9375 դրամ),
- 14000 դրամ (5600,0 հազ. դրամ: 400 = 14000 դրամ):

Կազմակերպչի կողմից ամսվա համար վճարվող հաստատագրված վճարի չափը հաշվարկված է՝

- առաջին տարածքի համար՝ 1200,0 հազ. դրամ
($Z\Phi = \Pi \times \Phi U \times Op \times Q_1 \times Q_2 \times Q_3 \times U = 100 \times 800 \text{ մ}^2 \times 10 \text{ op} \times 1,25 \times 1,2 \times 1,0 \times 1,0 = 1200,0 \text{ հազ. դրամ}$).

- երկրորդ տարածքի համար՝ 1860,0 հազ. դրամ
($Z\Phi = \Pi \times \Phi U \times Op \times Q_1 \times Q_2 \times Q_3 \times U = 100 \times 400 \text{ մ}^2 \times 31 \text{ op} \times 1,25 \times 1,2 \times 1,0 \times 1,0 = 1860,0 \text{ հազ. դրամ}$):

Հաստատագրված վճարի հաշվարկման համար օրենքով նախատեսված 0.7 գործակիցը չի կիրառվում, քանի որ տոնավաճառը չի գտնվում առևտրական դահլիճ ունեցող մշտական շինությունում:

Մեկ քառ. մետրի հաշվով ամսվա համար այն համապատասխանաբար կազմում է.

- 1500 դրամ (1200,0 հազ. դրամ: 800 մ² = 1500 դրամ),
- 4650 դրամ (1860,0 հազ. դրամ: 400 մ² = 4650 դրամ):

1 մ² հաշվով «Արմեն» ՄՊԸ-ի կողմից օգոստոս ամսվա համար գանձվող վճարների գումարների և նույն ամսվա համար վճարվող (հաշվարկված) հաստատագրված վճարի մեծության հարաբերակցությունը ըստ տարածքների համապատասխանաբար կազմում է՝

- 6,25 (9375 դրամ: 1500 դրամ = 6,25),
- 3,01 (14000 դրամ: 4650 դրամ = 3,01):

Հետևաբար հաստատագրված վճարի գումարն առաջին տարածքի համար կավելացվի 2 անգամ և կկազմի 2400,0 հազ. դրամ (1200,0 հազ. դրամ \times 2,0), իսկ երկրորդ տարածքի համար, քանի որ չկա սահմանային չափի գերազանցում, կմնա անփոփոխ:

Այսպիսով, կազմակերպության տվյալ ամսվա հաստատագրված վճարի չափը կկազմի 4260,0 հազ. դրամ (2400,0 հազ. դրամ + 1860,0 հազ. դրամ):

(Օրինակ 3.3-ը խմբ. 02.05.02 N 02/578)

3.12. Գյուղատնտեսական արտադրանքի շուկա հանդիսացող առևտրի իրականացման վայրի համար հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս կիրառվում է 0,4 ուղղիչ գործակիցը: Եթե գյուղատնտեսական արտադրանքի շուկայում գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից բացի առկա է նաև այլ ապրանքների վաճառք, ապա 0,4 ուղղիչ գործակիցը կիրառվում է միայն գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի համար առանձնացված (փաստացի օգտագործվող) տարածքի մասով:

Օրինակ 3.4.

Երևանում գտնվող գյուղատնտեսական արտադրանքի երկհարկանի շուկայում (որի տարածքը կազմում է 600 քառ. մետր) առևտուր իրականացնողների մի մասը, շուկայի մի հատվածում 150 քառ. մետր մակերեսի վրա, առևտուր է իրականացնում ոչ գյուղատնտեսական արտադրանք հանդիսացող (մասնավորապես տնտեսական բնույթի) ապրանքների գծով:

Տվյալ դեպքում, կազմակերպիչը իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացվող էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության ձևի մեջ, այդ տարածքները (մակերեսները) արտացոլում է յուրաքանչյուր մասով առանձին-առանձին (երկու սյունակով):

Օրինակում բերված դեպքում շուկայի 450 մ² (600 մ²-150 մ² = 450 մ²) կազմող այն մասի համար, որտեղից իրականացվում է գյուղատնտեսական արտադրանքի վաճառք կիրառվում է 0,4 ուղղիչ գործակից, իսկ մյուս 150 մ² կազմող մասի համար՝ 1,25 ուղղիչ գործակիցը:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆԱԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Օրենքի գործողությունը չի տարածվում հանրակրթական դպրոցների, պրոֆտեխնիկական ուսումնարանների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքերում տեղադրված հանրային սննդի գործունեության իրականացման օբյեկտների վրա՝ սովորողներին (դպրոցականներին, ուսանողներին) և աշխատավորական կոլեկտիվի անդամներին մատուցված հանրային սննդի ծառայությունների մասով:

Օրինակ 4.1.

Միջնակարգ դպրոցի բուֆետում (որն ունի 60 քառ. մետր սպասարկման սրահ) կազմակերպվում է խոհարարական արտադրանքի իրացում (սպառում) դպրոցականների և դպրոցի աշխատավորական կոլեկտիվի անդամների համար:

Համաձայն օրենքի 33 հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի, այստեղ հաստատագրված վճարներ չեն գործում և հարկումն իրականացվում է ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Օրինակ 4.2.

Օրինակ 4.1-ում նշված դպրոցի բուֆետը (ճաշարանը) վարձակալությամբ տրամադրվել է «Պապյան» ընկերությանը՝ հանրային սննդի ոլորտում (ոչ դպրոցական կարիքների համար, մասնավորապես, ամառային արձակուրդների ընթացքում) տնտեսական գործունեություն իրականացնելու համար:

Այս դեպքում հարկումը կատարվում է հաստատագրված վճարների ձևով:

4.2 Հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը, քառակուսի մետրերով արտահայտված, պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված, հատուկ կահավորված այն տարածքն է, որը ներառում է սպառողների կողմից պատրաստի խոհարարական արտադրանքի սպառման և հանրային սննդի գործունեության իրականացման վայրում նրանց ժամանցը կազմակերպելու համար նախատեսված տարածքները (մասնավորապես բեմահարթակների, պարահրապարակների, առանձնասենյակների և այլն):

Բացօթյա վայրում հանրային սննդի գործունեություն իրականացնելու դեպքում սպասարկման ընդհանուր մակերես է համարվում՝

- որևէ կերպ սահմանազատված (պատ, պարիսպ, ցանկապատ, հարթակ կամ համանման այլ ձևերով) տարածքի, կամ

- ծայրամասային (եզրային) սեղանների, տաղավարների (բեսեդկա) կամ համանման ժամանակավոր այլ կառույցների (ներառյալ դրանցում մեկ կամ քանի սեղաններ ներառող), ինչպես նաև այլ օժանդակ կառույցների (խոհանոց, հաճախորդների ժամանացի համար նախատեսված կառույցների (հարթակներ, խաղահրապարակներ, շատրվաններ և այլն) եզրակետերով տարված առավելագույն շրջագծում ընդգրկվող տարածքի՝

մակերեսներից առավելագույնը:

Բացօթյա վայրում երկու և ավելի հարթակների (կառույցի հարկերի) վրա կամ միաժամանակ՝ սահմանազատված և չսահմանազատված տարածքներում հանրային սննդի գործունեություն իրականացնելու դեպքում՝ որպես սպասարկման սրահի մակերես ընդունվում է յուրաքանչյուր հարթակի համար բացօթյա վայրերի համար սույն կետում նշված կարգով որոշված մակերեսների հանրագումարը:

(4.2-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

4.3. Հանրային սննդի ոլորտի գործունեություն իրականացնողների հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Z\Phi = \mathcal{N} \times \mathcal{U}\mathcal{U} \times \mathcal{Q}_1 \times \mathcal{Q}_2 \times \mathcal{L}\mathcal{Q}_1 \times \mathcal{L}\mathcal{Q}_2 \times \mathcal{L}\mathcal{Q}_3 \times \mathcal{L}\mathcal{Q}_4 \times \mathcal{U} \text{ որտեղ՝}$$

ZΦ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - ելակետային տվյալի և համապատասխան ուղղիչ գործակիցների արտադրյալի բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

ՄՄ - քառակուսի մետրերով արտահայտված սպասարկման մակերեսը,

Պ₁ - բացօթյա վայրերի համար՝ տարածքի օգտագործման գործոնի հետ կապված ուղղիչ գործակիցն է,

Պ₂ - սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող վայրերի (օբյեկտների) համար ուղղիչ գործակիցն է,

ԼՊ₁ - բար-վարիետների, բեմական ցուցադրումներ ունեցող հանրային սննդի այլ վայրերի (օբյեկտների), ինչպես նաև գիշերային ժամերին (24⁰⁰ -ից մինչև 6⁰⁰) աշխատող բարերի համար լրացուցիչ կիրառվող ուղղիչ գործակիցն է,

ԼՊ₂ - բացօթյա վայրերի համար՝ ապրիլ-հոկտեմբեր ամիսների համար կիրառվող լրացուցիչ ուղղիչ գործակիցն է,

ԼՊ₃ - հանրային սննդի գործունեության իրականացման վայրի (օբյեկտի) զբաղեցրած սպասարկման սրահի (սրահների) մակերեսը 50 քառակուսի մետրը չգերազանցելու դեպքում կիրառվող լրացուցիչ ուղղիչ գործակիցն է,

ԼՊ₄ - Սյունիքի, Վայոց ձորի, Շիրակի, Լոռու, Տաուշի մարզերում գտնվող հանրային սննդի գործունեության իրականացման վայրերի (օբյեկտների) համար կիրառվող լրացուցիչ ուղղիչ գործակիցն է,

Մ - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից:

(4.3-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

4.4. Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար օրենքի 33 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված է սահմանային չափ՝ հարկ վճարողների կողմից 1մ² հաշվով եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալը 200 հազ. դրամը գերազանցելու դեպքում վերջիններս հաշվետու եռամսյակի համար հարկերը կվճարեն հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Օրինակ 4.3.

Երևան քաղաքում գտնվող կազմակերպությանը պատկանող սրճարանում իրականացվում է հանրային սննդի գործունեություն: Սրճարանում սպասարկման մակերեսը կազմում է 70 մ²: Հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար անկախ տվյալ եռամսյակի իրացման շրջանառությունից, կատարվում է հաստատագրված վճարների մուծում հետևյալ չափով.

$$ՀՎ = \mathcal{N} \times \text{ՄՄ} \times \text{Ա} = 2000 \times 70 \text{ մ}^2 \times 1,0 = 140\,000 \text{ դրամ:}$$

Հաստատագրված վճարի հաշվարկման համար օրենքով նախատեսված ուղղիչ գործակիցներ չեն կիրառվում այն պատճառով, որ

ա) սրճարանը չի հանդիսանում բացօթյա վայր,

բ) սրճարանը սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող օբյեկտ չէ,

գ) սրճարանը չի համարվում բար-վարիետեի, բեմական ցուցադրումներ ունեցող հանրային սննդի այլ վայր, ինչպես նաև գիշերային ժամերին (24⁰⁰-ից մինչև 6⁰⁰) աշխատող բար,

դ) սրճարանի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը գերազանցում է 50 քառակուսի մետրը,

ե) սրճարանը գտնվում է Երևանում:

Համաձայն օրենքի 19 հոդվածի 3-րդ կետի՝ շահութահարկի գծով կանխավճարային մուծումներ նշված ամիսների համար չեն կատարվելու:

Եռամսյակն ավարտվելուց հետո կազմակերպությունը օրենքի 13 հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին է ներկայացնում սահմանային չափերի ցուցանիշների վերաբերյալ հայտարարությունը՝ ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից հաստատված ձևով, որում կատարված հաշվարկներից պարզվում է, որ սրճարանի ապրանքաշրջանառության ծավալը եռամսյակի համար կազմել է 11450,0 հազ. դրամ: Քանի որ տվյալ դեպքում եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալը 1 քառ. մետրի հաշվով կազմում է 163,6 հազ. դրամ (չի գերազանցում օրենքի 33 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված սահմանային չափը), ապա, տվյալ դեպքում, որևէ վերահաշվարկ չի կատարվում և շահութահարկի և ԱԱՀ-ի հարկային պարտավորություններն այդ եռամսյակի համար կազմում է հաստատագրված վճարի գումարի չափը:

(Օրինակ 4.3-ը 02.05.02 N 02/578)

Օրինակ 4.4.

Կազմակերպությունը Երևան քաղաքի Պոռոշյան փողոցում գտնվող իրեն պատկանող երկհարկանի տան առաջին հարկի 2 սենյակներում և տնամերձ այգու մի մասում իրականացնում է հանրային սննդի գործունեություն: Սենյակներից մեկում տեղաբաշխված է խոհանոցը, իսկ մյուս՝ 17 քառ. մետր մակերես ունեցող սենյակը և այգու 15 քառ. մետր մակերես ունեցող հատվածը հանդիսանում են սպասարկման սրահ: Տվյալ դեպքում, ապրիլ-հունիս ամիսների համար, անկախ տվյալ եռամսյակի իրացման շրջանառությունից, կատարվում է հաստատագրված վճարի մուծում հետևյալ չափերով՝

ապրիլ ամսվա համար

- 17 մ² տարածքի (ոչ բացօթյա վայրի) համար՝

$$ՀՎ = \mathcal{N} \times \text{ՄՄ} \times \text{ԼԳ}, \times \text{Ա} = 2000 \times 17 \text{ մ}^2 \times 0,75 \times 1,0 = 25500 \text{ դրամ,}$$

- 15 մ² տարածքի (բացօթյա վայրի) համար՝

$$ՀՎ = \mathcal{N} \times \text{ՄՄ} \times \text{Գ}, \times \text{ԼԳ}, \times \text{Ա} = 2000 \times 15 \text{ մ}^2 \times 0,7 \times 1,5 \times 0,75 \times 1,0 = 23625 \text{ դրամ:}$$

Օրենքի 36-րդ հոդվածի «ե» ենթակետով սահմանված 0.75 լրացուցիչ ուղղիչ գործակիցը (L₉) կիրառվում է քանի որ հանրային սննդի վայրի (օբյեկտի) զբաղեցրած սպասարկման սրահների մակերեսը (17+15=32) չի գերազանցում 50 մ² :

Կազմակերպության կողմից ապրիլ ամսվա համար վճարվող հաստատագրված վճարի ընդհանուր գումարը կկազմի 49125 դրամ (25500+23625=49125):

Քանի որ եռամսյակի մյուս 2 ամիսների համար էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների փոփոխություն չի կատարվել, ապա եռամսյակի համար հաստատագրված վճարների ընդհանուր գումարը կկազմի 147375 դրամ (3x49125):

Հանրային սննդի օբյեկտի ապրանքաշրջանառությունը կազմել է 6800,0 հազ. դրամ: Քանի որ 1 մ² -ի հաշվով եռամսյակի ընթացքում ապրանքաշրջանառության ծավալը գերազանցել է սահմանային չափը՝ 200 հազ. դրամը (կազմել է 212,5 հազ. դրամ (6800,0 : 32 = 212,5)), ապա հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով կազմակերպությունը անցած եռամսյակի համար հարկերը կվճարի ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, իսկ վճարված 147375 դրամ հաստատագրված վճարի գումարը օրենքի 16 հոդվածի համաձայն ենթակա է հաշվանցման, ընդ որում՝ 88425 դրամը (147375 դրամի 60%-ը) ԱԱՀ-ի և 58950 դրամը (147375 դրամի 40%-ը) շահութահարկի գծով հարկային պարտավորությունների դիմաց (ԱԱՀ-ի մասով հաշվապահական ձևակերպումների ճշգրտումը կատարվում է 2.8. կետի և օրինակի համանմանությամբ):

Հաջորդ ամիսների համար կազմակերպությունն ամեն դեպքում կատարում է հաստատագրված վճարներ՝ հաջորդ եռամսյակի արդյունքներով, նորից վերը նշված կարգով կատարելով համեմատություն:

(Օրինակ 4.4-ը խմբ. 02.05.02 N 02/578)

4.5. Եռամսյակի ընթացքում հանրային սննդի գործունեության իրականացման վայրի էլակետային տվյալ հանդիսացող սպասարկման մակերեսի փոփոխության դեպքում սահմանային չափի գերազանցումը հաշվարկելիս եռամսյակի համար հիմք է ընդունվում միջին ամսական սպասարկման մակերեսը:

Օրինակ 4.5.

Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունը իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացրել է էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն: Հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահի մակերեսը ապրիլ ամսվա համար հայտարարել է 31 մ²: Մայիսի 12-ին ներկայացրել է էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն, որում սպասարկման սրահի մակերեսը հայտարարել է 40 մ²: Իսկ հունիսի 20-ին ներկայացված էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարությունով հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահի մակերեսը հայտարարվել է 30 մ²:

Տվյալ եռամսյակի համար սահմանային չափի գերազանցումը հաշվարկելիս միջին ամսական սպասարկման սրահի մակերեսը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$UU = \frac{31 + 40 + 40}{3} = 37 \text{ մ}^2$$

Տվյալ դեպքում, էլնելով այն հանգամանքից, որ օրենքով հանրային սննդի համար սահմանվել է ամսական հաստատագրված վճար և գործունեության իրականացման

օրերը և դրանց թիվը ելակետային տվյալ չեն հանդիսանում, ինչպես մայիս ամսվա, այնպես էլ հունիս ամսվա համար սպասարկման սրահի մակերեսը ընդունվում է 40մ² :

(4.5-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

4.6. Սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող վայրի (օբյեկտի) համար նախատեսված 0.5 ուղղիչ գործակիցը կիրառվում է այն դեպքում, երբ տվյալ վայրում (օբյեկտում) հանրային սննդի սպասարկումը իրականացվում է բացառապես կազմակերպության աշխատանքային կոլեկտիվի անդամներին:

Օրինակ 4.6.

Մյունիքի մարզի գործարանի տարածքում տեղաբաշխված ճաշարանը, որն ունի 47 քառ. մետր սպասարկման սրահ, սպասարկում է սահմանափակ քանակակազմով սպառողների՝ աշխատավորական կոլեկտիվի անդամներին: Տվյալ դեպքում ճաշարանի համար հաստատագրված վճարի ամսական չափը կկազմի՝

$ՀՎ = Պ \times ՄՄ \times \Phi_2 \times \text{L}\Phi_3 \times \text{L}\Phi_4 \times \text{Ա} = 2000 \times 47 \text{մ}^2 \times 0,5 \times 0,75 \times 0,7 \times 1,0 = 24675 \text{ դրամ:}$

(4.6-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

4.7. Արտաքին բուֆետների միջոցով հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար, անկախ վերջիններիս բացօթյա լինելու կամ չլինելու հանգամանքից, բացօթյա վայրերի համար նախատեսված ուղղիչ գործակիցներ չեն կիրառվում:

Արտաքին բուֆետների, որոնց սպասարկման մակերեսը համաձայն օրենքի ընդունվում է 20 քառակուսի մետր, հաստատագրված վճարները հաշվարկելիս հանրային սննդի գործունեության իրականացման վայրի (օբյեկտի) զբաղեցրած սպասարկման սրահի (սրահների) մակերեսի (50 քառակուսի մետրը չգերազանցելու) հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակիցը չի կիրառվում:

Հանրային սննդի մեկ վայրում (օբյեկտում) արտաքին բուֆետի միջոցով իրականացվող հանրային սննդի սպասարկման տարբեր ձևերի առկայության դեպքում (մասնավորապես, շարժական պաղպաղակային սարքեր, «Գրիլ» սարքեր), հաստատագրված վճարի հաշվարկումը կատարվում է յուրաքանչյուրի համար առանձին, իսկ հարկային տեսչության մարմինն ներկայացվում է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ մեկ (միասնական) հայտարարություն՝ հանրային սննդի վայրի համար (կատարվում է համապատասխան նշում ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության «Սպասարկման մակերես» տողի վերջին սյունակում):

(4.7-րդ կետը խմբ. 02.05.02 N 02/578)

4.8. Հանրային սննդի կազմակերպումը մի քանի վայրերում իրականացնելու դեպքում հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր վայրի համար առանձին և յուրաքանչյուր օբյեկտի համար հարկային տեսչության մարմիններին ներկայացվում է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ առանձին հայտարարություն:

Օրինակ 4.7.

Կազմակերպությունը տոնավաճառի շենքում տեղաբաշխված շարժական վայրի (արտաքին բուֆետ) միջոցով, հանրային սննդի ոլորտում իրականացնում է տնտեսական գործունեություն:

Քանի որ, հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացվում է արտաքին բուֆետի միջոցով, ուստի օրենքի 35 հոդվածի 2-րդ կետի համաձայն,

սպասարկման մակերեսն ընդունվում է 20 քառ. մետր: Ըստ էության, հանրային սննդի օբյեկտը չունի սպառողների սահմանափակ քանակակազմ:

Հաստատագրված վճարի չափը կկազմի՝

$$ՀՎ = \mathcal{N} \times \mathcal{U} \times U = 2000 \times 20 \text{ մ}^2 \times 1,0 = 40000 \text{ դրամ:}$$

Միաժամանակ կազմակերպությունը Վայոց ձորի մարզում շահագործում է «Գրիլ» սարք (հավի խոհարարական մշակում): Հաստատագրված վճարի չափը այս դեպքում, կիրառելով հանրային սննդի օբյեկտի գտնվելու վայրի հետ կապված օրենքով սահմանված 0.7 լրացուցիչ ուղղիչ գործակիցը ($L_{\mathcal{Q}_i}$), կկազմի՝

$$ՀՎ = \mathcal{N} \times \mathcal{U} \times L_{\mathcal{Q}_i} \times U = 2000 \times 20 \text{ մ}^2 \times 0.7 \times 1,0 = 28\ 000 \text{ դրամ:}$$

Քանի որ, կազմակերպությունը հանրային սննդի ոլորտում գործունեություն է իրականացնում տարբեր վայրերում գտնվող երկու առանձին արտաքին բուֆետների միջոցով, ապա իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացնում է էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ երկու առանձին հայտարարություն:

(Օրինակ 4.7-ը խմբ. 02.05.02 N 02/578)

Օրինակ 4.8.

(Օրինակ 4.8-ն ուժը կորցրել է 02.05.02 N 02/578)

4.9. Հանրային սննդի ոլորտում իրականացվող արտադրական գործունեության համար հարկերը հաշվարկվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Օրինակ 4.9.

Կազմակերպությունը հանրային սննդի ոլորտում արտադրական գործունեության իրականացման համար Շիրակի մարզում ունի խոհարարական նախապատրաստվածքի արտադրամաս:

Կազմակերպությունը, վերը նշած արտադրական գործունեությունից բացի, 40 մ² սպասարկման սրահից (ոչ բացօթյա) իրականացնում է խոհարարական արտադրանքի պատրաստման և սպառման կազմակերպում (օրենքի շրջանակներում ներառվող գործունեության իրականացում):

Քանի որ, ըստ էության հանրային սննդի օբյեկտը չունի սպառողների սահմանափակ քանակակազմ, հաստատագրված վճարի գումարը տվյալ ամսվա համար կկազմի՝

$$ՀՎ = \mathcal{N} \times \mathcal{U} \times L_{\mathcal{Q}_i} \times L_{\mathcal{Q}_i} \times U = 2000 \times 40 \text{ մ}^2 \times 0.75 \times 0.7 \times 1,0 = 42\ 000 \text{ դրամ:}$$

Իսկ արտադրական գործունեության մասով, կազմակերպությունը հարկերը կվճարի ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

(Օրինակ 4.9-ը խմբ. 02.05.02 N 02/578)

4.10. Այն հարկ վճարողները, որոնք հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար չունեն համապատասխան սպասարկման սրահներ (բացառությամբ օրենքի 35 հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի) հարկերը հաշվարկվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Օրինակ 4.10. «Բերդ» կոոպերատիվը հանրային սննդի ոլորտում իրականացնում է տնտեսական գործունեություն և այդ նպատակով ընդունում է պատվերներ այլ տնտեսավարող սուբյեկտներից՝ կազմակերպելու միանգամյա ճաշկերույթներ (այդ թվում՝ այդ տնտեսավարող սուբյեկտների կողմից ընտրված համապատասխան

վայրերում): Կոռուպցիայի գործունեության այդ մասով հարկերը հաշվարկում և վճարում է հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

4.11. Հայաստանի Հանրապետության «Հանրային սնունդ. Տերմիններ և սահմանումներ» ՀՍ 112-95 ստանդարտում սահմանված են հանրային սննդի վայրերի (օբյեկտների) տիպերը (մասնավորապես ռեստորան, սրճարան, բար, ճաշարան, նախաճաշարան, բուֆետ հասկացությունները), իսկ նշված տիպերից ելնող (տիպերին բնորոշ) մասնագիտացումները, դասակարգման չափանիշները, ինչպես նաև ներկայացվող պահանջները ամրագրված են «Հանրային սնունդ. Ձեռնարկությունների դասակարգումը և դրանց ներկայացվող պահանջները» Հայաստանի Հանրապետության ՀՍ 176-98 ստանդարտում:

Օրինակ 4.11.

Երևան քաղաքում գտնվող հանրային սննդի օբյեկտում (վայրում) կազմակերպությունը իրականացնում է հանրային սննդի գործունեություն երկու տարբեր սպասարկման սրահների միջոցով: Դրանք 4.11-րդ կետում նշված Հայաստանի Հանրապետության ստանդարտների պահանջներից ելնելով համապատասխանում են՝ առաջինը՝ ռեստորանի (սպասարկման սրահը՝ 48մ²), իսկ երկրորդը՝ բար-վարիետեի (սպասարկման սրահը՝ 48մ²): Քանի որ հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահների մակերեսը գերազանցում է 50մ² (48+48=96մ²), ապա սպասարկման սրահներից ոչ մեկի նկատմամբ օրենքի 36 հոդվածի «ե» ենթակետով սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը կիրառելի չէ:

Տվյալ դեպքում, բար-վարիետեի համար հաստատագրված վճարը հաշվարկելիս կիրառվում է օրենքի 36 հոդվածի «բ» ենթակետով սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը:

(4.11-րդ կետը լրաց. 02.05.02 N 02/578)

4.12. Օրենքի 36-րդ հոդվածի «բ» ենթակետով նախատեսված լրացուցիչ ուղղիչ գործակիցը կիրառվում է բար-վարիետեների նկատմամբ, ինչպես նաև հանրային սննդի վայրի (օբյեկտի) այն սպասարկման սրահի նկատմամբ, որտեղ իրականացվում (նախատեսվում) են հետապար (ստրիպտիզ) և անհատական կամ համույթային համանման այլ ցուցադրումներ:

Նշված լրացուցիչ ուղղիչ գործակիցը կիրառվում է նաև այն բարերի համար, որոնց աշխատանքի տևողության որևիցե հատվածը ներառվում է 24⁰⁰-ից մինչև 6⁰⁰-ը ընկած ժամանակահատվածում:

(4.12-րդ կետը լրաց. 02.05.02 N 02/578)

**4. ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

(4՝ բաժինը լրաց. 02.05.02 N 02/578)

4՝.1. Բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպում հասկացությունն իր մեջ ներառում է, մասնավորապես, ցնցուղարանների, բաղնիքների, սաունաների և շոգեբաղնիքների կազմակերպումը: Ընդ որում, սաունա և շոգեբաղնիք են համարվում այն բաղնիքները, որոնցում առկա են նաև օդի տաքացման (ֆիննական՝ սաունա, թուրքական բաղնիք) կամ գոլորշի արտադրող (ռուսական) սարքավորումներ:

4.2 Հաստատագրված վճար վճարողներ են համարվում բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպման ոլորտում գործունեություն իրականացնողները՝ վճարովի ծառայությունների մասով:

4.3. Բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպման գործունեություն իրականացնողների հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՀՎ} = \text{Պ} \times \text{Մ} \times \text{Գ}_1 \times \text{Գ}_2 \times \text{Ա որտեղ՝}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցների արտադրյալի բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

Մ - քառակուսի մետրով արտահայտված բաղնիքների և ցնցուղարանների գործունեության կազմակերպման շենք-շինության մակերեսն է,

Գ₁ - սաունաների և (կամ) շոգեբաղնիքների համար կիրառվող ուղղիչ գործակիցն է,

Գ₂ - սաունաներում և (կամ) շոգեբաղնիքներում չընդգրկված բաղնիքների և (կամ) ցնցուղարանների համար կիրառվող ուղղիչ գործակիցն է,

Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից:

4.4. Հաստատագրված վճարի հաշվարկման համար շենք-շինության ընդհանուր մակերեսը, այն մակերեսն է, որտեղ ըստ էության իրականացվում է բաղնիքների և ցնցուղարանների գործունեություն և որն իր մեջ ներառում է այդ ծառայությունից օգտվողներին (սպառողներին) մատուցվող ինչպես լողանալու համար հատուկ սարքավորված, այնպես էլ այլ ծառայությունների և ժամանցի համար նախատեսվող (օգտագործվող) շենք-շինությունում գտնվող տարածքը:

Օրինակ 4.1

Կազմակերպությունը Երևան քաղաքում գտնվող շոգեբաղնիքի (սաունայի) միջոցով իրականացնում է բաղնիքների և ցնցուղարանների գործունեություն: Շոգեբաղնիքի (սաունայի) տարածքում առկա են, մասնավորապես՝ նախասրահ, հանդերձարան, ջրավազան, ցնցուղարան, ինչպես նաև մարզասարքերով և ժամանցը կազմակերպելու համար այլ տարածքներ: Քանի որ, դրանք նախատեսված (օգտագործվում) են շոգեբաղնիքի (սաունայի) ծառայությունից օգտվողների համար, ապա վերջիններիս զբաղեցրած տարածքները ներառվում են ելակետային տվյալում:

Տվյալ դեպքում հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար Գ₂ գործակիցը չի կիրառվում:

Օրինակ 4.2

Կազմակերպությունը բաղնիքի (հանրային) միջոցով իրականացնում է բաղնիքների և ցնցուղարանների գործունեություն: Բաղնիքում առկա են սպառողներին սպասարկելու համար առանձին և ընդհանուր համարներ: Տվյալ դեպքում ելակետային տվյալում ներառվում են շենք-շինությունում գտնվող՝ այդ համարների տարածքների մակերեսների հանրագումարը:

Տվյալ դեպքում, քանի որ բաղնիքը ընդգրկված չէ շոգեբաղնիքում (սաունայում), ապա հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար Գ₂ գործակիցը կիրառվում է:

4.5. Օրենքի 36⁵-րդ հոդվածի «բ» ենթակետով սահմանված ուղղիչ գործակիցը չի կիրառվում սաունաներում և(կամ) շոգեբաղնիքներում ընդգրկված բաղնիքների և(կամ) ցնցուղարանների համար:

4.6. Քանի որ օրենքով բաղնիքների և ցնցուղարանների գործունեության համար սահմանվել է ամսական հաստատագրված վճար (գործունեության իրականացման օրերը և դրանց թիվը ելակետային տվյալ չեն հանդիսանում), ապա անկախ գործունեության սկսման (վերսկսման) ամսաթվից (օրվանից) հաստատագրված վճարը հաշվարկվում է լրիվ ամսվա համար:

4.7. Միևնույն վճարողի կողմից տարբեր վայրերում գտնվող շենք-շինություններում բաղնիքների և ցնցուղարանների գործունեություն իրականացնելու դեպքում յուրաքանչյուր շենք-շինության համար իր հաշվառման վայր տարածքային հարկային տեսչության մարմնին ներկայացնում է ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ առանձին հայտարարություն:

(4¹ բաժինը լրաց. 02.05.02 N 02/578)

5. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

5.1. Վճարողներ են հանդիսանում սահմանված կարգով լիցենզավորման ենթակա ավտոտրանսպորտային միջոցներ շահագործողները՝ (այդ թվում նաև քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա վարձակալական հիմունքներով օգտագործող) ավտոտրանսպորտային միջոցներով ուղևորների և բեռների ավտոմոբիլային փոխադրումների ծառայություններ մատուցելու մասով:

Այն հարկ վճարողները, որոնք ավտոտրանսպորտային միջոցներն օգտագործում են սեփական ներարտադրական (ներտնտեսական) կարիքների (փոխադրումների) համար, այդ մասով հաստատագրված վճարներ կատարողներ չեն հանդիսանում:

5.2. Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՀՎ} = \text{Պ} \times \text{Տ} \times \text{Օր} \times \text{Գ} \times \text{ԼԳ}_1 \times \text{ԼԳ}_2 \times \text{Ա որտեղ՝}$$

- Վ
- հաստատագրված վճարի ամսական չափն է,
 - ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցների արտադրյալի բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,
 - ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված ուղղիչ գործակիցն է, ընդ որում՝
 - թեթև մարդատար ավտոմեքենաների համար՝ 1.0,
 - բեռնատար ավտոմեքենաների համար՝ տոննայով արտահայտված բեռնատարողությունը,
 - ավտոբուսների համար՝ նստատեղերի քանակը.
- Ր
- ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերի թիվն է,
 - ուղղիչ գործակիցն է, կապված՝
 - գոտիականության հետ (բեռնատար և թեթև մարդատար ավտոմեքենաների համար),
 - երթուղիների հետ (ավտոբուսների համար),
 - ավտոբուսների ներքաղաքային երթուղիների համար կիրառվող լրացուցիչ ուղղիչ
- Գ1 գործակիցն է,

- մինչև 13 նստատեղ ունեցող միկրոավտոբուսների համար կիրառվող լրացուցիչ Գ2 ուղղիչ գործակիցն է,
- սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ հարկային տեսչության կողմից:

5.3. Նախնական պատվերով, ինչպես նաև ըստ նախնական պատվերի համապատասխան պայմանագրերի համաձայն ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողները հաստատագրված վճարների հաշվարկումը և վճարումը կատարում են օրենքի 5 գլխով նախատեսված ավտոտրանսպորտային միջոցների յուրաքանչյուր տեսակի համար սահմանված կարգով:

Օրինակ 5.1.

Անհատ ձեռներեցն իր կողմից շահագործվող թեթև մարդատար (տաքսի) ավտոմեքենայով ուղևորափոխադրումներ է կատարում Երևան քաղաքում: Օգոստոս ամսվա ընթացքում առանց հանգստյան օրերի աշխատելու դեպքում (31 օր), գործունեության այդ մասով անհատ ձեռներեցի հաստատագրված վճարի հաշվարկումը կատարվում է հետևյալ կերպ.

$$ՀՎ = \mathcal{N} \times S \times \mathcal{O} \times \mathcal{F} \times U = 100 \times 1 \times 31 \text{ օր} \times 3,4 \times 1,0 = 10540 \text{ դրամ}$$

Օրինակ 5.2.

Անհատ ձեռներեցն իր կողմից շահագործվող թեթև մարդատար ավտոմեքենայով (օրինակ, «Կադիլակ» մակնիշի) նախնական պատվերի համաձայն, ուղևորափոխադրումների ծառայություններ է մատուցում (մասնավորապես հարսանյաց հանդեսների, եկեղեցական ծիսակատարությունների գծով) պատվիրատուներին: Այդ գործունեության մասով անհատ ձեռներեցը հաստատագրված վճարի հաշվարկումն ու պետական բյուջե վճարումը կատարում է տաքսի (թեթև մարդատար) ավտոմեքենաների համար սահմանված կարգով

Օրինակ 5.3.

«Ավտոմեքենա» ԲԲԸ-ն, որը Երևան քաղաքում (համապատասխան լիցենզիայի հիման վրա) զբաղվում է ուղևորների ավտոմոբիլային փոխադրումների ծառայություններ մատուցելով, ըստ համապատասխան պայմանագրերի Հայաստանի Հանրապետության մի շարք գերատեսչություններին որոշակի ժամանակով, իրեն պատկանող թեթև մարդատար ավտոմեքենաներով (օրինակ, ԳԱԶ-3102 մակնիշի), մատուցում է ավտոմոբիլային փոխադրումների ծառայություններ (նշված գերատեսչությունների ներտնտեսական կարիքների համար): Տվյալ դեպքում հաստատագրված վճար կատարող հանդիսանում է «Ավտոմեքենա» ԲԲԸ-ը, որը հաստատագրված վճարը հաշվարկում և վճարում է պետական բյուջե տաքսի ավտոմեքենաների համար սահմանված կարգով:

5.4. Բեռնատար կամ թեթև մարդատար ավտոմեքենաներով միջմարզային, միջպետական փոխադրումների իրականացման դեպքում կիրառվում է այդ վայրերի համար օրենքի 41 հոդվածով սահմանված գոտիականության հետ կապված համապատասխան ուղղիչ գործակիցներից առավելագույնը:

Օրինակ 5.4.

Տավուշի մարզի «Անիվ» ՄՊԸ-ի կողմից շահագործվող բեռնատար ավտոմեքենայով իրականացվում է միջմարզային բեռնափոխադրումների ծառայությունների մատուցում: Ընկերությունն իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացված էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունով տեղեկացրել է, որ սեպտեմբեր ամսվա ընթացքում (30 օր) նշված բեռնատար ավտոմեքենայով բեռնափոխադրումներ են կատարվելու Տավուշի մարզից Երևան քաղաք: Ավտոմեքենայի բեռնատարողությունը 5 տոննա է:

Այդ ամսվա համար հաստատագրված վճարի չափը կկազմի՝

$$ՀՎ = \mathcal{N} \times S \times \mathcal{O} \times \mathcal{F} \times U = 100 \times 5 \times 30 \text{օր} \times 1,9 \times 1,0 = 28500 \text{ դրամ:}$$

5.5. Ավտոկցորդով բեռնատար ավտոմեքենաների միջոցով ավտոմոբիլային փոխադրումների ծառայություններ իրականացնելու դեպքում ավտոկցորդի բեռնատարողությունը ներառվում է բեռնատար ավտոմեքենաների էլակետային տվյալներում:

5.4. Այն դեպքերում, երբ ավտոտրանսպորտային փոխադրումների ծառայություններ իրականացնողների կողմից, նույն տրանսպորտային միջոցով մինևույն ամսվա (Ժամանակաշրջանի) ընթացքում իրականացվում է մեկից ավելի տեսակի ավտոտրանսպորտային փոխադրումների ծառայություններ, ապա հաստատագրված վճարի հաշվարկման համար, օրենքի 39 հոդվածի 2-րդ կետի համաձայն, հիմք են ընդունվում ավտոտրանսպորտային փոխադրումների այդ տեսակներից առավելագույն բարձր չափի էլակետային տվյալներ (մասնավորապես՝ այդ ամսվա (Ժամանակաշրջանի) ընթացքում իրականացվող գործունեության տեսակների օրերի ընդհանուր թիվը) և ուղղիչ գործակիցներ ունեցող տեսակի համար նախատեսվածները:

Ընդ որում, երբ տվյալ ամսվա (Ժամանակաշրջանի) համար, ըստ գործունեության առանձին տեսակների, ներկայացված են համապատասխան էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ առանձին հայտարարություններ, ապա հաստատագրված վճարների գումարները կհաշվարկվեն ըստ գործունեության տեսակների:

Օրինակ 5.5.

«Ռաֆ» մակնիշի միկրոավտոբուսով (11 նստատեղ) անհատ ձեռներեցը Երևան քաղաքի տարածքում մատուցում է ծառայություններ ուղևորափոխադրումների գծով: Ամսվա համար անհատ ձեռներեցի կողմից գործունեության իրականացման օրերի թիվը հայտարարված է 24 օր:

Հաստատագրված վճարի մեծությունը տվյալ ամսվա համար կկազմի՝

$$ՀՎ = \mathcal{N} \times S \times \mathcal{O} \times \mathcal{F} \times I_1 \times I_2 \times U = 100 \times 11 \times 24 \text{օր} \times 1,0 \times 1,0 \times 1,2 \times 1,0 =$$

31680 դրամ:

Օրինակ 5.6.

«Ռաֆ» մակնիշի միկրոավտոբուսով (11 նստատեղ) անհատ ձեռներեցը իր գործունեությունը կազմակերպել է այնպես, որ բացի Երևան քաղաքի տարածքում իրականացվող ուղևորափոխադրումներից, այդ ամսվա նույն օրերին իրականացնելու է նաև ուղևորափոխադրումներ միջքաղաքային երթուղիներում: Ամսվա համար անհատ ձեռներեցի կողմից գործունեության իրականացման օրերի թիվը հայտարարված է 24 օր:

Այս դեպքում հաստատագրված վճարի մեծությունը տվյալ ամսվա համար կկազմի՝

$$ՀՎ = \mathcal{N} \times S \times \mathcal{O} \times \mathcal{F} \times L \mathcal{Q}_1 \times U = 100 \times 11 \times 24 \text{ օր} \times 1,2 \times 1,2 \times 1,0 = 38016 \text{ դրամ:}$$

Օրինակ 5.7.

Օրինակ 5.6.-ում բերված նույն անհատ ձեռներեցի կողմից, ըստ իրականացվող գործունեության տեսակների, հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին էլակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցների վերաբերյալ առանձին հայտարարություններ սահմանված կարգով ներկայացրած լինելու դեպքում տվյալ ամսվա համար հաստատագրված վճարը կհաշվարկվի ըստ առանձին տեսակների: Ամսվա համար անհատ ձեռներեցի կողմից ներկայացված հայտարարություններում գործունեության իրականացման օրերի թիվը հայտարարված է`

- Երևան քաղաքի տարածքում իրականացվող ուղևորափոխադրումների համար` 14 օր,

- միջքաղաքային երթուղիներում ուղևորափոխադրումների համար` 10 օր
Այս դեպքում հաստատագրված վճարի մեծությունը հաշվարկվում է`

- Երևան քաղաքում ուղևորափոխադրումների համար`

$$ՀՎ = \mathcal{N} \times S \times \mathcal{O} \times \mathcal{F} \times L \mathcal{Q}_1 \times L \mathcal{Q}_2 \times U = 100 \times 11 \times 14 \text{ օր} \times 1,0 \times 1,0 \times 1,2 \times 1,0 =$$

18480 դրամ:

- միջքաղաքային երթուղիներում ուղևորափոխադրումների համար`

$$ՀՎ = \mathcal{N} \times S \times \mathcal{O} \times \mathcal{F} \times L \mathcal{Q}_1 \times U = 100 \times 11 \times 10 \text{ օր} \times 1,2 \times 1,2 \times 1,0 = \text{ դրամ:}$$

Տվյալ ամսվա համար անհատ ձեռներեցը կվճարի 34320 դրամ (18480 + 15840) հաստատագրված վճար:

6. ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

6.1. Վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության համար հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՀՎ = \mathcal{N} \times S \times \mathcal{O} \times \mathcal{F} \times U \text{ որտեղ`}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

\mathcal{N} - էլակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակցի արտադրյալի բազմապատիկ

մեծությունն է` արտահայտված դրամներով,

S - վարսավիրական ծառայության աշխատատեղերի քանակն է,

\mathcal{O} - ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերի թիվն է,

\mathcal{F} - վարսավիրանոցի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է,

U - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ հարկային տեսչության կողմից:

6.2. Վարսավիրական ծառայության մատուցման աշխատատեղեր չեն հանդիսանում վարսավիրանոցներում գտնվող (տեղաբաշխված) եղունգների խնամքի, դիմահարդարման, մեքսման և նման այլ ծառայությունների մատուցման հատուկ

աշխատատեղերը: Այդ ծառայությունների հարկումը կատարվում է ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Օրինակ 6.1.

Երևանում գտնվող, «Բրիգ» ԼՏԸ-ին պատկանող գեղեցկության սրահում, բացի վարսավիրական ծառայություններից, մատուցվում են նաև այլ ծառայություններ՝ հատուկ սարքավորումներով կահավորված սենյակներում կատարվում են դիմահարդարման (մակիաժ, դեմքի մերսում) և ձեռնեղունգների ստաժման, ոտների մատների հարդարման աշխատանքներ: Վարսավիրական ծառայություն են մատուցում 10 վարսավիրներ, որոնք աշխատում են հերթափոխով (5 վարսավիրներ աշխատում են ամսվա առաջին կեսին, իսկ մյուս 5 վարսավիրները՝ ամսվա երկրորդ կեսին): Վարսավիրական ծառայությունների մատուցման աշխատատեղերի (բազկաթոռների) քանակը հինգ է: Իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացված էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունում գործունեության ընկերության կողմից չեն նախատեսված հանգստյան օրեր:

Տվյալ դեպքում սեպտեմբեր ամսվա համար հաստատագրված վճարի գումարը կկազմի՝

$$ՀՎ = Պ \times S \times Օր \times Գ \times U = 420 \times 5 \times 30 \times 1,0 \times 1,0 = 63000 \text{ դրամ:}$$

7. ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

7.1. Լուսանկարչական լաբորատորիաների միջոցով իրականացվող գործունեության համար հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՀՎ = Պ \times S \times Օր \times Գ \times ԼԳ \times U \text{ որտեղ՝}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - էլակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցների արտադրյալի

բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

S - աշխատատեղերի քանակն է,

Օր - ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերի թիվն է,

Գ - լուսանկարչական լաբորատորիայի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է,

ԼԳ - ֆոտոժապավենների երևակման կամ գործունեության տեսակներից միայն մեկի

իրականացման դեպքում կիրառվող լրացուցիչ ուղղիչ գործակիցն է,

U - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ հարկային տեսչության կողմից:

7.2. Ֆոտոժապավենների երևակման և (կամ) լուսանկարների պատրաստման աշխատատեղերը սահմանված են ՀՀ կառավարության 31.07.98 թ. «Հաստատագրված

վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 482 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետով:

7.3. Լուսանկարչական լաբորատորիայում նույնատիպ, միանման աշխատատեղերի առկայության դեպքում այդ աշխատատեղերը դիտարկվում են որպես առանձին աշխատատեղեր:

Օրինակ 7.1.

Վանաձոր քաղաքի «Ժպիտ» ՄՊԸ-ն, վարձակալված շինությունում, բացի լուսանկարումից, իրականացնում է նաև ֆոտոժապավենների երևակման և լուսանկարների պատրաստման աշխատանքներ: Մեկ աշխատատեղում կատարվում է պատվերների ընդունում և կատարված պատվերների հանձնում, երկու աշխատատեղերում լուսանկարների երևակում, իսկ չորրորդ աշխատատեղում կատարվում են լուսանկարների տպման և բազմացման աշխատանքներ:

Գործունեություն իրականացնողը, իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունում սեպտեմբեր ամսվա համար նախատեսել է հանգստյան հինգ օր՝ նշելով դրանք:

Հաստատագրված վճարի գումարը ամսվա (25 օրվա հաշվով) համար կկազմի՝

$$ՀՎ = Պ \times S \times Օր \times Գ \times U = 850 \times 4 \text{ աշխ. տեղ} \times 25 \text{ օր} \times 0.9 \times 1,0 = 76500 \text{ դրամ:}$$

Հաստատագրված վճարի գումարը որոշելիս չի կիրառվում օրենքի 51 հոդվածի «բ» կետով սահմանված «0,8» լրացուցիչ ուղղիչ գործակիցը (LԳ), քանի որ լուսանկարչատանը կատարվում է և՛ ֆոտոժապավենների երևակում, և՛ լուսանկարների պատրաստում:

7.4. Եթե լուսանկարչատներում (լուսանկարչասրահներում) ֆոտոժապավենների երևակման և (կամ) լուսանկարների պատրաստման աշխատանքները կատարվում են ոչ լաբորատոր եղանակով (մասնավորապես ակնթարթային լուսանկարահանում, համակարգիչների միջոցով լուսանկարների պատրաստում), ապա նման գործունեությունը (աշխատանքները) դիտարկվում է որպես լուսանկարչական լաբորատորիաների միջոցով իրականացվող գործունեություն:

7.5. Եթե լուսանկարչական լաբորատորիաներում (կամ լուսանկարչատանը) առկա է լուսանկարչական ապարատների, ֆոտոժապավենների, լուսանկարների ալբոմների և (կամ) այլ ապրանքների վաճառքի իրականացում, ապա այդ մասով հարկ վճարողն իր հարկերը հաշվարկում և վճարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան կարգով (մասնավորապես, հաստատագրման ենթակա գործունեության դեպքում՝ հաստատագրված վճարների տեսքով):

8. ԱՎՏՈՏԵԽՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ (ԿԵՏԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

8.1. Ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար հաստատագրված վճար վճարողներ են հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գործունեություն իրականացնողները: Ընդ որում, վերջիններիս կողմից տեխնիկական սպասարկման գործընթացի ժամանակ օգտագործվող առանձին ավտոպահեստամասերի արժեքը մատուցվող ծառայությունների (ավտոտեխսպասարկման) ընդհանուր արժեքի մեջ ներառվելու

դեպքում գործունեություն իրականացնողները կվճարեն հաստատագրված վճար՝ ընդհանուր ավտոտեխսպասարկման կայանի (կետի) գործունեության համար:

8.2. Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Z\text{Վ} = \text{Պ} \times S \times \text{Օր} \times \text{Ա որտեղ՝}$$

ZՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - ելակետային տվյալների արտադրյալի նկատմամբ կիրառվող արտադրյալի բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

S - աշխատատեղերի քանակն է,

Օր - ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերի թիվն է,

Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ հարկային տեսչության կողմից:

8.3. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղերը որոշվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով (ՀՀ կառավարության 31.07.98 թ. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 482 որոշման 2-րդ կետի «բ» ենթակետ):

8.4. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղերից մի քանիսի՝ մեկ անձի կողմից համատեղման դեպքում համատեղած աշխատատեղերը համարվում են մեկ աշխատատեղ, իսկ նույնատիպ, միանման աշխատատեղերի առկայության դեպքում այդ աշխատատեղերը դիտարկվում են որպես առանձին աշխատատեղեր:

8.5. Այն հարկ վճարողները, որոնք իրենց պատկանող (իրենց կողմից շահագործվող) ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման աշխատանքներից բացի իրականացնում են (նաև) այլ (կողմնակի) ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման աշխատանքներ, ապա անկախ այդ աշխատանքների ծավալների հարաբերական մեծություններից, ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գործունեության մասով հանդիսանում են հաստատագրված վճար վճարողներ:

Օրինակ 8.1.

«Տաքսի-N» ԲԲԸ-ն իր կողմից շահագործվող 100 տաքսի ավտոմեքենաներով Երևան քաղաքի բնակչությանը մատուցում է ավտոմոբիլային փոխադրումների ծառայություններ: Բացի 100 տաքսի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման աշխատանքներից, ընկերության համապատասխան ստորաբաժանումը (որը պատասխանատու է ավտոմեքենաների տեխնիկական վիճակի համար) ազատ ժամերին կատարում է նաև կողմնակի (իրեն չպատկանող կամ իր կողմից չշահագործվող) ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման աշխատանքներ, որոնց դիմաց վճարված գումարները մուտքագրվում են ընկերության դրամարկղ:

Տվյալ դեպքում, բացի ավտոտրանսպորտային գործունեության մասով հաստատագրված վճար վճարող լինելուց, ընկերությունը հանդիսանում է նաև հաստատագրված վճար վճարող՝ իր կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման գործունեության համար, և համաձայն օրենքի 15 հոդվածի 3-րդ կետի,

գործունեության այդ տեսակներից յուրաքանչյուրի համար վարում է առանձնացված հաշվապահական հաշվառում:

8.6. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գործունեություն իրականացնողները օրենքով սահմանված ժամկետներում իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին են ներկայացնում ելակետային տվյալների և սահմանային չափերի վերաբերյալ հայտարարությունները՝ յուրաքանչյուր ավտոտեխսպասարկման կայանի (կետի) համար:

Օրինակ 8.2. «Մեքենա» ՄՊԸ-ն իրականացնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման գործունեություն ավտոտեխսպասարկման կետի միջոցով, որն ունի 4 աշխատատեղ (երկուսը անվադողերի հետ կապված սպասարկման ծառայությունների, մեկը՝ թափքի հարդարման և մեկը՝ շարժվող մասերի վերանորոգման):

Աշխատանքային օրերի թիվը կազմել է 27 օր:

1998 թ. սեպտեմբեր ամսվա համար, անկախ տվյալ եռամսյակի իրացման շրջանառությունից, կատարվում է հաստատագրված վճարի մուծում հետևյալ չափերով.

$$ՀՎ = \mathcal{N} \times S \times \text{Օր} \times U = 350 \times 4 \times 27 \times 1,0 = 37800 \text{ դրամ}$$

Ամիսն ավարտվելուց հետո ընկերությունը օրենքի 13 հոդվածի 4-րդ կետով սահմանված ժամկետում իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին է ներկայացնում սահմանային չափերի ցուցանիշների վերաբերյալ հայտարարությունները՝ ՀՀ հարկային տեսչության կողմից հաստատված ձևերով, որում կատարված հաշվարկներից պարզվում է, որ ավտոտեխսպասարկման կետի իրացման շրջանառության ծավալը (ներառյալ օգտագործված ավտոպահեստամասերի արժեքը) ամսվա համար կազմել է 3500,0 հազ. դրամ: Քանի որ տվյալ դեպքում ամսվա իրացման շրջանառության ծավալը 1 աշխատատեղի հաշվով կազմում է 875,0 հազ. դրամ (գերազանցում է օրենքով նախատեսված սահմանային չափը), այս տվյալ ամսվա համար վճարված 37800 դրամ հաստատագրված վճարի գումարը ենթակա է հաշվանցման՝ օրենքի 16 հոդվածի համաձայն: Ընդ որում, ԱԱՀ-ի մասով հաշվապահական ձևակերպումների ճշգրտումը կատարվում է 2.8. կետի և օրինակի համանմանությամբ:

Հաջորդ ամսվա համար ընկերությունը, անկախ սահմանային չափը գերազանցելու կամ չգերազանցելու հանգամանքից, շարունակում է հաստատագրված վճարների կատարումը:

8.7. Ամսվա ընթացքում ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար ելակետային տվյալ հանդիսացող աշխատատեղերի քանակի փոփոխման դեպքում սահմանային չափի գերազանցումը հաշվարկելիս հիմք է ընդունվում միջին ամսական աշխատատեղերի քանակը, որը որոշվում է գործունեության իրականացման օրերի թվին համապատասխան:

Օրինակ 8.3.

«Արշակ» ՄՊԸ-ն, իրականացնում է ավտոտեխսպասարկման գործունեություն 6 աշխատատեղ ունեցող ավտոտեխսպասարկման կայանի միջոցով: Աշխատանքային օրերի քանակը, ըստ ներկայացված ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարության, 1998 թ. հոկտեմբեր ամսվա համար կազմում է 31 օր: Հոկտեմբերի 20-ից ՄՊԸ-ն ելակետային տվյալների վերաբերյալ նոր հայտարարություն ներկայացնելու միջոցով, կայանի աշխատատեղերի քանակը ավելացրել է 4 տեղով (դարձել է 10

աշխատատեղ): *Տվյալ ամսվա համար սահմանային չափի գերազանցումը հաշվարկելիս ընկերությունը աշխատատեղերի քանակը ըստ գործունեության իրականացման օրերի թվի հաշվարկում է հետևյալ կերպ.*

$$S = \frac{(6_{տեղ} \times 19_{օր} + 10_{տեղ} \times 12_{օր})}{31_{օր}} = 7,5_{տեղ}$$

9. ԲԵՆՁԻՆԻ ԵՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

9.1. Օրենքի 57 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, գործունեության այս տեսակի համար հաստատագրված վճարներով հարկման ենթակա չեն այն հարկ վճարողները, որոնք բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի մեկ կետում բենզալցումը և (կամ) դիզելային վառելիքի լցումն իրականացնում են 3 և ավելի խողովակների միջոցով: Ընդ որում, հաստատագրված վճար վճարող համարվելու նպատակով խողովակների քանակը որոշելիս (հաշվառելիս), տարաների միջոցով վաճառք իրականացնելը չի համարվում խողովակների միջոցով իրականացվող վաճառք, իսկ հաստատագրված վճարի չափը որոշելիս, օրենքի 58 հոդվածի 2-րդ կետի համաձայն, այն (վճարի չափը) հավասարեցվում է բենզալցման (կամ դիզելային վառելիքի լցման) խողովակի միջոցով իրականացվող գործունեության համար հաշվարկված վճարի չափին:

Օրինակ 9.1.

Երևան քաղաքի Ն. Մանդելյանի փողոցում տեղաբաշխված է «Բենզին» ԲԲԸ-ի բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի N 1 կետը: Կետի տարածքում տեղակայված է երեք լցման սարք (խողովակներով), որոնցից առաջինի միջոցով իրականացվում է բենզալցում, երկրորդից՝ դիզելային վառելիքի լցում, իսկ երրորդը նախատեսված է շարժիչի յուղի վաճառքի համար:

Ընկերությունը N 1 կետում բենզինի և դիզելային վառելիքի վաճառքի մասով իր հարկերը կվճարի հաստատագրված վճարների տեսքով, իսկ շարժիչի յուղի վաճառքի մասով՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Օրինակ 9.2.

Օրինակ 9.1-ում նշված ընկերության բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի N 2 կետում 2 խողովակի միջոցով իրականացվում է բենզալցում, իսկ դիզելային վառելիքի լցումն իրականացվում է բացառապես տարաների միջոցով:

Տվյալ դեպքում, ընկերությունը N 2 կետի գործունեության մասով համարվում է հաստատագրված վճար վճարող և վճարի ամսական չափը հաշվարկվում է ելնելով խողովակների քանակից (2 խողովակ) և վառելիքի մյուս տեսակի վաճառքը տարաների միջոցով իրականացման հանգամանքից (հավասարեցվում է մեկ խողովակի միջոցով իրականացվող գործունեության համար հաշվարկվող հաստատագրված վճարի չափին): Հաստատագրված վճարի չափը հավասարեցվում է երեք խողովակի միջոցով իրականացվող գործունեության համար հաշվարկվող հաստատագրված վճարի ամսական չափին:

9.2. Այն դեպքերում, երբ մանրածախ վաճառքի կետում և բենզինի, և դիզելային վառելիքի վաճառքը իրականացվում է տարաների միջոցով, ապա նման գործունեությունը դիտարկվում է որպես երկու տարբեր խողովակների միջոցով իրականացվող գործունեություն:

9.3. Բենզալցման և դիզելային վառելիքի լցման խողովակների քանակից և (կամ) տարաների միջոցով վաճառք իրականացնելու հանգամանքի հետ կապված ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարության «Բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի կետում տեղակայված բենզալցման (կամ դիզելային վառելիքի լցման) խողովակների քանակը» տողում (5-րդ տող) նշումը կատարվում է համաձայն բերված աղյուսակի.

Բենզալցման խողովակ	Դիզ. վառելիքի լցման խողովակ	Տարաների միջոցով վաճառք		Ընդամենը
		բենզինի	դիզ. վառելիքի	
-	-	-	+	1
-	-	+	-	1
-	-	+	+	2
-	1	-	-	1
-	1	-	+	1
-	1	+	-	2
-	1	+	+	2
1	-	-	-	1
1	-	-	+	2
1	-	+	-	1
1	-	+	+	2
1	1	-	-	2
1	1	-	+	2
1	1	+	-	2
1	1	+	+	2
2	-	-	-	2
2	-	-	+	3
2	-	+	-	2
2	-	+	+	3
-	2	-	-	2
-	2	-	+	2
-	2	+	-	3
-	2	+	+	3

Օրինակ 9.3.

Օրինակ 9.1-ում նշված ընկերության բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի N 4 կետում բենզինի և դիզվառելիքի լցումն իրականացվում է բացառապես տարաների միջոցով:

Տվյալ դեպքում, ընկերության N 4 կետի ամսական հաստատագրված վճարի չափը հավասարեցվում է երկու խողովակի միջոցով իրականացվող գործունեության համար հաշվարկվող հաստատագրված վճարի ամսական չափին: Տվյալ դեպքում բենզալցումը և դիզելային վառելիքի լցումը դիտարկվում են որպես երկու տարբեր խողովակների միջոցով իրականացվող գործունեություն:

9.4. Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Z\text{Վ} = \text{Պ} \times \text{Խ} \times \text{Օր} \times \text{Ա որտեղ՝}$$

ZՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - ելակետային տվյալների արտադրյալի նկատմամբ կիրառվող բազմապատիկ մեծությունն

է՝ արտահայտված դրամներով,

Խ - բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի կետերում տեղակայված

բենզալցման (կամ դիզելային վառելիքի լցման) խողովակների քանակն է,

Օր - ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերի թիվն է,

Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ հարկային տեսչության կողմից:

9.5. Բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեության համար օրենքի 57 հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սահմանային չափը (վճարողների կողմից բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մեկ մանրածախ կետի միջոցով ամսվա ընթացքում իրացված բենզինի և (կամ) դիզելային վառելիքի քանակը 10 հազար լիտրը) գերազանցելու դեպքում վերջիններս տվյալ ամսվա համար հարկերը կվճարեն հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Օրինակ 9.4.

Չարենցավան քաղաքում գտնվող բենզալցման կետում 2 խողովակի միջոցով իրականացվում է բենզինի մանրածախ վաճառք: Գործունեություն իրականացնողը, իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին ներկայացված ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունում սեպտեմբեր ամսվա համար հանգստյան օրեր չի նախատեսել: Տվյալ դեպքում հաստատագրված վճարի ամսական չափը 1998թ. սեպտեմբեր ամսվա համար կկազմի.

$$Z\text{Վ} = \text{Պ} \times \text{Խ} \times \text{Օր} \times \text{Ա} = 1000 \times 2 \text{ խողովակ} \times 30 \text{ օր} \times 1,0 = 60000 \text{ դրամ}$$

Ամսվա ավարտից հետո գործունեություն իրականացնողը իր հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին է ներկայացնում հաստատագրված վճարի հաշվարկման ցուցանիշների սահմանային չափերի վերաբերյալ հայտարարությունը: Հայտարարությունից հայտնի է դառնում (պարզվում է), որ գործունեություն իրականացնողը գերազանցել է սահմանային չափը՝ տվյալ կետի միջոցով սեպտեմբեր ամսվա ընթացքում իրացվել է 12500 լիտր բենզին: Սեպտեմբեր ամսվա համար գործունեություն իրականացնողի կողմից վճարված է 60000 դրամ հաստատագրված վճարի գումարը, օրենքի 16 հոդվածի համաձայն ենթակա է հաշվանցման: Ընդ որում, ԱԱՀ-ի մասով հաշվապահական ձևակերպումների ճշգրտումը կատարվում է 2.8. կետի և օրինակի համանմանությամբ:

Հաջորդ ամսվա համար ընկերությունը, անկախ սահմանային չափը գերազանցելու կամ չգերազանցելու հանգամանքից, շարունակում է հաստատագրված վճարների կատարումը:

9՝ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ (ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(9' բաժինը լրաց. 02.05.02 N 02/578)

9.1. Վճարողներ են համարվում գազալցման կայանների (կետերի), այդ թվում՝ շարժական, միջոցով ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողները՝ գործունեության այդ մասով:

9.2. Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության համար հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Z\text{Վ} = \text{Պ} \times \text{Խ} \times \text{Գ} \times \text{Ա} \text{ որտեղ՝}$$

ZՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - ելակետային տվյալի և համապատասխան ուղղիչ գործակցի արտադրյալի բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

Խ - ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) կայանում (կետում) տեղակայված գազալցման (գազալիցքավորման) խողովակների քանակն է,

Գ - ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) կայանի (կետի) գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է,

Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից:

9.3. Քանի որ օրենքով ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության համար սահմանվել է ամսական հաստատագրված վճար (գործունեության իրականացման օրերը և դրանց թիվը ելակետային տվյալ չեն հանդիսանում), ապա անկախ գործունեության սկսման (վերսկսման) ամսաթվից (օրվանից) հաստատագրված վճարը հաշվարկվում է լրիվ ամսվա համար:

Օրինակ 9.1

Կազմակերպությունը Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող գազալցման կետի միջոցով իրականացնում է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն: Գազալցման կայանում տեղակայված է 6 գազալցման (գազալիցքավորման) խողովակ: Ամսվա համար կազմակերպությունը գործունեության այդ մասով հաստատագրված վճար կվճարի հետևյալ չափով՝

$$Z\text{Վ} = \text{Պ} \times \text{Խ} \times \text{Գ} \times \text{Ա} = 500000 \times 6 \times 1 \times 1 = 3000000 \text{ դրամ:}$$

Միաժամանակ, նույն ամսվա ընթացքում (հունվարի 10-ին) իր հաշվառման վայրի տարածքային հարկային տեսչություն ներկայացրել է ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ առանձին հայտարարություն, համաձայն որի նախատեսել է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն սկսել Վանաձոր քաղաքում գտնվող գազալցման կետի միջոցով, որտեղ տեղակայված է 1 գազալցման խողովակ: Հունվար ամսվա համար կազմակերպությունը այդ գազալցման կետի միջոցով իրականացվող ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության համար հաստատագրված վճար կվճարի հետևյալ չափով՝

$$Z\text{Վ} = \text{Պ} \times \text{Խ} \times \text{Գ} \times \text{Ա} = 500000 \times 1 \times 0.8 \times 1 = 400000 \text{ դրամ:}$$

Կազմակերպությունը այդ գործունեության մասով հունվար ամսվա համար կվճարի հաստատագրված վճար 3 400 000 դրամի չափով (3 000 000 + 400 000):

9.4. Միննույն վճարողի կողմից տարբեր վայրերում գտնվող գազալցման կայանների (կետերի) միջոցով ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն իրականացնելու դեպքում յուրաքանչյուր գազալցման կայանի (կետի) համար իր հաշվառման վայր տարածքային հարկային տեսչության մարմնին ներկայացվում է ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ առանձին հայտարարություն:

(9' բաժինը լրաց. 02.05.02 N 02/578)

10. ԱՎՏՈՎԱՆԳԱՌՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

10.1. Ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված քառակուսի մետրերով արտահայտված ընդհանուր տարածքը այն մակերեսն է, որն ըստ էության որոշակիորեն առանձնացված է և (կամ) փաստորեն օգտագործվում է ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար և ներառում է անմիջականորեն այդ գործունեության հետ կապված շինությունների զբաղեցրած մակերեսները, մասնավորապես ավտոտրանսպորտային միջոցների պահպանման, անվտանգության ապահովման նպատակով կառուցված (տեղադրված) շինությունների զբաղեցրած մակերեսները:

Ավտոկանգառների գործունեություն կազմակերպողների կողմից ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար ընդհանուր տարածքում անցուղիները որոշակիորեն առանձնացված (մասնավորապես նշագծմամբ) լինելու դեպքում, այդ անցուղիների մակերեսները չեն ներառվում ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված ընդհանուր տարածքի մեջ, եթե անցուղիներում ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանում չի կատարվում:

10.2. Եթե ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված ընդհանուր տարածքն անմիջապես ավտոմոբիլային ճանապարհի մաս է կազմում (ավտոկանգառի գործունեության իրականացումը տեղի է ունենում ավտոճանապարհների հիմնական մաս հանդիսացող հատվածներում, մասնավորապես կողնակների վրա), ապա ավտոկանգառի ընդհանուր տարածքի հաշվարկման համար հիմք են ընդունվում ավտոմոբիլային ճանապարհի համապատասխան հատվածի երկարությունը և լայնությունը՝ վերջինիս մեծությունն ընդունելով 6 մետր:

10.3. Ավտոկանգառների գործունեության համար հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Z\text{Վ} = \text{Պ} \times S \times \text{Օր} \times \text{Գ} \times \text{Ա որտեղ՝}$$

ZՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակցի արտադրյալի բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

S - ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված

ընդհանուր տարածքն է՝ քառակուսի մետրերով,

Օր - ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերի թիվն է,

Գ - ավտոկանգառի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է,
Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է
ՀՀ հարկային տեսչության կողմից:

11. ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

11.1. Ձկնաբուծարանների, ձկնային ֆերմաների, ձկան և ձկնամթերքների վերամշակման գործունեություն իրականացնողները գործունեության այդ մասով իրենց հարկերը վճարում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով (չեն հանդիսանում հաստատագրված վճար վճարողներ):

11.2. Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՀՎ = Պ \times Օր \times [(\text{Ք}_1 \times \text{Գ}_1) + \dots + (\text{Ք}_n \times \text{Գ}_n)] \times Ա \text{ որտեղ`}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակցի արտադրյալի բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

Օր - ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերի թիվն է,

Ք₁ ... n - որսագործիքների քանակներն են՝ ըստ որսագործիքների տեսակների,

Գ₁ ... n - արդյունագործական ձկնորսության գործունեության իրականացման որսագործիքների տեսակի հետ կապված ուղղիչ գործակիցներն են,

Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ հարկային տեսչության կողմից:

11.3. Արդյունագործական ձկնորսության գործունեություն իրականացնողների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունում գործունեության իրականացման օրերի, որսագործիքների քանակի և տեսակների մասին նշումների համար հիմք են ծառայում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան պետական կառավարման մարմնի կողմից ձկան արդյունագործական որս իրականացնողներին տրվող թույլատրագրերում (կամ թույլատրագրող պետական կառավարման մարմնի լիազոր կառույցի և թույլատրագրվող կողմի միջև կնքված պայմանագրում) ամրագրված տվյալները՝ որսասեզոնի ժամանակ արդյունագործական ձկնորսության գործունեության իրականացման օրերը (դրանց թիվը), որսագործիքների քանակը և տեսակները:

12. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

12.1. Հաստատագրված վճար վճարողներ չեն հանդիսանում բանկերի գործառնական գրասենյակների (կետերի) միջոցով արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները:

12.2. Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՀՎ = \mathcal{N} \times \mathcal{Q} \times \mathcal{U} \text{ որտեղ`}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

\mathcal{N} - ուղղիչ գործակցի նկատմամբ կիրառվող բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

\mathcal{Q} - արտարժույթի փոխանակման կետի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է,

\mathcal{U} - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում

է ՀՀ հարկային տեսչության կողմից:

Օրինակ 12.1.

Երևան քաղաքի N շուկայի տարածքում գործում է «Կապիտալ» բանկի N 27 արտարժույթի փոխանակման կետը, որի միջոցով իրականացվում է արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն: Այնքանով-որքանով արտարժույթի փոխանակման կետը հանդիսանում է բանկի գործառնական կետ, այն չի հանդիսանա հաստատագրված վճար վճարող:

Օրինակ 12.2.

Օրինակ 1-ում նշված շուկային հարող տարածքում անհատ ձեռներեցը, արտարժույթի փոխանակման կետում, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա իրականացնում է արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն:

Մեպտեմբեր ամսվա համար, անկախ գործունեության իրականացման օրերի թվից, անհատ ձեռներեցի հաստատագրված վճարի ամսական չափը կկազմի՝

$$ՀՎ = \mathcal{N} \times \mathcal{Q} \times \mathcal{U} = 50000 \times 1,1 \times 1,0 = 55000 \text{ դրամ,}$$

որտեղ «1,1»-ը արտարժույթի փոխանակման կետի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է (ըստ ՀՀ կառավարության 31.07.98 թ. N 482 որոշման, Երևան քաղաքի V գոտու համար սահմանված է 1,1 մեծությամբ ուղղիչ գործակից (արտարժույթի փոխանակման կետի գտնվելու փողոցը ներառված է V գոտում)):

13. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐՆԵՐԻ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՈՔ ՈՒ ՎԱՃԱՈՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13.1. Հաստատագրված վճար վճարողներ չեն հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերի շուկայի մասնակիցները (մասնավորապես, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, ֆոնդային բորսաները, ֆոնդային ստորաբաժանում ունեցող այլ բորսաները, ինվեստիցիոն խորհրդատվական գրասենյակները, ինվեստիցիոն բրոքերային գրասենյակները, թողարկման կազմակերպությունները, անկախ ինվեստիցիոն բրոքերները, անկախ ինվեստիցիոն դիլերները):

13.2. Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Z\text{Վ} = 125000 \text{ դրամ} \times U \text{ որտեղ`}$$

ZՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,
U - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ հարկային տեսչության կողմից:

Օրինակ 13.1.

Անհատ ձեռներեցր, Հայաստանի Հանրապետության տարածքում, ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան լիցենզիայի հիման վրա, իրականացնում է արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն:

Մեպտեմբեր ամսվա համար, անկախ գործունեության իրականացման օրերի թվից և վայրից, անհատ ձեռներեցի հաստատագրված վճարի ամսական չափը կկազմի`
 $Z\text{Վ} = 125000 \text{ դրամ} \times 1,0 = 125000 \text{ դրամ:}$

14. ԽԱՂԱՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14.1. Խաղատանը դրամական շահումով խաղային ավտոմատ շահագործվելու դեպքում, տվյալ խաղատան գործունեություն կազմակերպողը, այդ մասով իր հաստատագրված վճարը հաշվարկում է դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման համար օրենքով սահմանված հաստատագրված վճարների հաշվարկման կարգով:

14.2. Խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալ է հանդիսանում տեղադրված խաղասեղանների քանակը` անկախ խաղատան (խաղասրահի) զբաղեցրած մակերեսից:

14.3. Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Z\text{Վ} = \text{Պ} \times \text{Խ} \times \text{Գ} \times U \text{ որտեղ`}$$

ZՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,
Պ - ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակցի արտադրյալի բազմապատիկ մեծությունն է` արտահայտված դրամներով,
Խ - տեղադրված խաղասեղանների քանակն է,
Գ - խաղատան գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է,
U - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ հարկային տեսչության կողմից:

Օրինակ 14.1.

«Ֆորտունա» ՄՊԸ-ն 1998 թվականի սեպտեմբերի 6-ից կազմակերպել է խաղատան գործունեություն Երևան քաղաքի արվարձանում (Երևան քաղաքի VIII գոտի) վարձակալական հիմունքներով իրեն տրամադրված երկհարկանի շինության երկրորդ հարկում (առաջին հարկի տարածքում տեղաբաշխված ռեստորանի միջոցով

ընկերությունն իրականացնում է հանրային սննդի գործունեություն): Խաղատան խաղասրահում տեղադրված է երկու խաղասեղան և տասը դրամական շահումով խաղային ավտոմատ:

Մեպտեմբեր ամսվա համար, անկախ գործունեության սկսման ամսաթվից (օրվանից), ընկերության կողմից խաղատան գործունեության կազմակերպման և դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման համար, պետական բյուջե վճարման ենթակա հաստատագրված վճարի գումարը կկազմի. -

խաղասեղանների մասով $Z\text{Վ} = \mathcal{N} \times \text{Խ} \times \mathcal{Գ} \times \text{Ա} = 1500000 \times 2 \times 0,7 \times 1,0 = 2100000$ դրամ,
- խաղային ավտոմատների մասով

$Z\text{Վ} = \mathcal{N} \times \text{Խ} \times \mathcal{Գ} \times \text{Ա} = 50000 \times 10 \times 1,0 \times 1,0 = 500000$ դրամ:

«Տորտունա» ՍՊԸ-ն հանրային սննդի գործունեության մասով իր հարկերը հաշվարկում է օրենքի 4 գլխով սահմանված կարգով:

15. ԴՐԱՄԱԿԱՆ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15.1. Հաստատագրված վճար վճարողի կողմից լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սարքեր շահագործելու դեպքում հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալ է հանդիսանում խաղասրահի մակերեսը (արտահայտված քառակուսի մետրերով), որտեղ անցկացվում են լոտոտրոն, բինգո և (կամ) մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սարքերի միջոցով անցկացվող (կազմակերպվող) խաղերը: Խաղասրահի մակերեսի մեջ ներառվում է նաև խաղերի անցկացման համար անհրաժեշտ բոլոր սարքերի, սարքավորումների զբաղեցրած մակերեսները, իսկ խաղասրահում դրամական շահումով այլ ավտոմատների առկայության դեպքում՝ այդ ավտոմատների զբաղեցրած մակերեսը:

15.2. Այլ ավտոմատներ (դրամական շահումով) շահագործելու դեպքում հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալ է հանդիսանում տեղադրված (առկա) ավտոմատների քանակը:

(15.2-րդ կետը լրաց. 02.05.02 N 02/578)

15.3. Եթե խաղասրահում, որտեղ անցկացվում են լոտոտրոն, բինգո և (կամ) մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սարքերի միջոցով անցկացվող (կազմակերպվող) խաղերը, առկա է դրամական շահումով խաղային ավտոմատներ շահագործողի կողմից այլ գործունեության իրականացում, ապա այդ մասով շահագործողը իր հարկերը հաշվարկում և վճարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան կարգով (մասնավորապես, հաստատագրման ենթակա գործունեության դեպքում՝ հաստատագրված վճարների տեսքով):

15.4. Դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման համար հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Z\text{Վ} = \mathcal{N} \times \text{Խ} \times \mathcal{Գ} \times \text{Ա որտեղ՝}$$

ZՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

Պ - համապատասխան ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի բազմապատիկ

մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

Խ - ելակետային տվյալն է, որը հավասար է՝
- լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճակահանության համար
ծրագրավորվող այլ
սարքերի համար՝ խաղասրահի քառակուսի մետրերով մակերեսին,
- այլ ավտոմատների համար՝ տեղադրված ավտոմատների քանակին:

Գ - դրամական շահումով խաղային ավտոմատների գտնվելու վայրի հետ կապված
ուղղիչ գործակիցն է,

Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի
հրապարակվում է

ՀՀ հարկային տեսչության կողմից:

Օրինակ 15.1. «Տիգրան» ՍՊԸ-ն, Գորիս քաղաքի սննդառին պատկանող խանութի
(ունիվերսամի) վարձակալված տարածքում կազմակերպում է բինգո խաղ: Խաղասրահի
մակերեսը կազմում է 200 քառ. մետր:

Ընկերության կողմից բինգո խաղի կազմակերպման համար օգոստոս ամսվա
հաստատագրված վճարը կկազմի՝

$$\text{ՀՎ} = \mathcal{N} \times \text{Խ} \times \text{Գ} \times \text{Ա} = 10000 \times 200 \times 0,8 \times 1,0 = 1600000 \text{ դրամ:}$$

Օրինակ 15.2.

Երևան քաղաքի «Ղարս» հյուրանոցի առաջին հարկում, «Միքայել» ԲԲԸ-ն
շահագործում է թվով 7 դրամական շահումով խաղային ավտոմատներ:

Մեպտեմբեր ամսվա համար, անկախ գործունեության իրականացման օրերի թվից,
դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման համար
հաստատագրված վճարի ամսական չափը կկազմի՝

$$\text{ՀՎ} = \mathcal{N} \times \text{Խ} \times \text{Գ} \times \text{Ա} = 50000 \times 7 \times 1,0 \times 1,0 = 350000 \text{ դրամ:}$$

15. ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

(15՝ բաժինը լրաց. 02.05.02 N 02/578)

15՝.1. Վիճակախաղի կազմակերպման գործունեություն իրականացնող
վճարողները մինչև գործունեություն սկսելը (վերսկսելը) ելակետային տվյալի մասին
հայտարարություն չեն ներկայացնում:

15՝.2. Վիճակախաղի կազմակերպիչները տվյալ ամսվա ընթացքում անցկացված
բոլոր խաղարկությունների համար իրացված վիճակախաղերի տոմսերի ընդհանուր
արժեքի վերաբերյալ հայտարարությունը իրենց հաշվառման վայրի տարածքային
հարկային մարմնին ներկայացնում են տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

15՝.3. Վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի
ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀՎ} = \text{SU} \times \mathcal{Q} \times \text{Ա, որտեղ՝}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,

SU - տվյալ ամսվա ընթացքում անցկացված բոլոր խաղարկությունների համար
իրացված վիճակախաղերի տոմսերի ընդհանուր արժեքը,

Q - հաստատագրված վճարի հաշվարկման համար օրենքի 863-րդ հոդվածով
սահմանված չափն է,

Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից:
(15' բաժինը լրաց. 02.05.02 N 02/578)

16. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

16.1. Համակարգչային խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՀՎ} = \text{Պ} \times \text{Մ} \times \text{Գ} \times \text{Ա} \text{ որտեղ`}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,
Պ - ելակետային տվյալի և համապատասխան ուղղիչ գործակցի արտադրյալի բազմապատիկ
մեծությունն է՝ արտահայտված դրամներով,
Մ - տեղակայված մոնիտորների ընդհանուր քանակն է,
Գ - համակարգչային խաղերի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է,
Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՀՀ հարկային տեսչության կողմից:

Օրինակ 16.1.

«Մանուկ» ՍՊԸ-ն, Երևան քաղաքի արվարձանում, N դպրոցի մոտ գտնվող շինությունում իրականացնում է համակարգչային խաղերի կազմակերպման գործունեություն: Շինությունում տեղակայված են վեց մոնիտորներ:

Սեպտեմբեր ամսվա համար, անկախ գործունեության իրականացման օրերի թվից և մոնիտորների աշխատանքային բեռնվածության հանգամանքից, համակարգչային խաղեր կազմակերպողի (գործունեության այդ մասով) հաստատագրված վճարի գումարը կկազմի՝

$\text{ՀՎ} = \text{Պ} \times \text{Մ} \times \text{Գ} \times \text{Ա} = 10000 \times 6 \times 1,5 \times 1,0 = 90000$ դրամ որտեղ «1,5»-ը համակարգչային խաղերի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է (ըստ ՀՀ կառավարության 31.07.98թ. N 482 որոշման, Երևան քաղաքի VIII գոտու համար սահմանված է 1,5 մեծությամբ ուղղիչ գործակից (համակարգչային խաղերի գտնվելու վայրը ներառված է VIII գոտում)):

17. ՏԵՍԱԺԱՊԱՎԵՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱՄԱԳՆԻՏՈՖՈՆՆԵՐԻ ՎԱՐՁՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

17.1. Տեսաժապավենների և տեսամագնիտոֆոնների վարձույթի համար հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՀՎ} = \text{Պ} \times \text{Գ} \times \text{Ա} \text{ որտեղ`}$$

ՀՎ - հաստատագրված վճարի ամսական չափն է,
Պ - համապատասխան ուղղիչ գործակցի նկատմամբ կիրառվող բազմապատիկ մեծությունն է՝ արտահայտված դրամներով,

Գ - տեսաժապավենների (տեսամագնիտոֆոնների) վարձույթի կետի գտնվելու վայրի հետ

կապված ուղղիչ գործակիցն է,

Ա - սպառողական գների փաստացի աճի ինդեքսն է, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում

է ՀՀ հարկային տեսչության կողմից:

17.2. Տեսաժապավենների և (կամ) տեսամագնիտոֆոնների վարձույթի կետերում միաժամանակ առևտրական գործունեություն իրականացման (մասնավորապես՝ տեսաժապավենների վաճառքի) դեպքում այդ մասով հարկերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան կարգով (մասնավորապես, հաստատագրման ենթակա գործունեության դեպքում՝ հաստատագրված վճարների տեսքով):

Օրինակ 17.1.

Երևան քաղաքի «Էրեբունի» օդանավակայանի տարածքում, անհատ ձեռներեցր, վարձակալված տաղավարում (առևտրական տարածքը 8 մ²), առևտրական գործունեության իրականացումից՝ տեսաժապավենների վաճառքից բացի, վերջիններս (տեսաժապավենները) հատկացնում է, տրամադրում է նաև վարձույթով:

Սեպտեմբեր ամսվա համար, անկախ գործունեության իրականացման օրերի թվից և վարձույթով հատկացված տեսաժապավենների քանակից, տեսաժապավենների վարձույթի համար (գործունեության այդ մասով) անհատ ձեռներեցի հաստատագրված վճարի գումարը կկազմի՝

$$ՀՎ = \mathcal{N} \times \mathcal{G} \times \mathcal{U} = 40000 \times 1,3 = 52000 \text{ դրամ,}$$

որտեղ «1,3»-ը տեսաժապավենների (տեսամագնիտոֆոնների) վարձույթի կետի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է (ըստ ՀՀ կառավարության 31.07.98 թ. N 482 որոշման, Երևան քաղաքի VI գոտու համար սահմանված է 1,3 մեծությամբ ուղղիչ գործակից («Էրեբունի» օդանավակայանի տարածքը ներառված է VI գոտում)):

Անհատ ձեռներեցր առևտրական գործունեության (տեսաժապավենների վաճառքի) մասով իր հարկերը հաշվարկում է օրենքի 2 գլխով սահմանված կարգով, քանի որ տաղավարի առևտրական տարածքը կազմում է 8 քառ. մետր:

18. ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԻՄԱՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրինակ 18.1.

ՄՊԸ-ն իր հաշվառման վայրի տարածքային հարկային տեսչության մարմին ներկայացված հայտարարության մեջ հայտարարագրել էր առևտրական գործունեության իրականացումը 20 մ² առևտրական տարածքի (մակերեսի) միջոցով:

Սահմանված կարգով ներկայացված էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը տրված է 3 ամսվա (օրինակ, հունվար-փետրվար-մարտ) համար, ընդ որում, այդ ամիսների ընթացքում հանգստյան օրեր չեն նախատեսվել:

Հարկային տեսչության մարմինը ՄՊԸ-ի մոտ կատարած համապատասխան վերահսկողական աշխատանքների արդյունքում պարզել է, որ ստուգման պահի դրությամբ ՄՊԸ առևտրական գործունեությունը փաստացի իրականացնում է 28մ²-ից:

Հիմք ընդունելով օրենքի 94 հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը և 2-րդ կետը, հարկային տեսչության մարմնի կողմից կատարվում է հաստատագրված վճարի վերահաշվարկ՝ ելնելով առևտրական գործունեության համար օգտագործվող տարածքի փաստացի մակերեսից (28 մ²-ից): Այնքանով-որքանով ՄՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարության մեջ գործունեության իրականացման օրերի և դրանց թվի վերաբերյալ որևէ խախտումներ չեն արձանագրվի, վերահաշվարկը կկատարվի միայն առևտրական տարածքի (մակերեսի) մասով գործունեության իրականացման օրերի թիվը ընդունելով սահմանված կարգով ներկայացված հայտարարության մեջ արտացոլված օրերի թվին հավասար:

Հաստատագրված վճարներով հարկվող գործունեության մյուս տեսակների համար, սույն օրինակում նշված ձևով հաստատագրված վճարի վերահաշվարկը կատարվում է հիմք ընդունելով գործունեության տվյալ ոլորտի համար նախատեսված ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների՝ ստուգման (վերահսկողական աշխատանքների) արդյունքում արձանագրված փաստացի մեծությունը:

Օրենքի 94 հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի հատկանիշներով խախտումներ հայտնաբերվելու դեպքում վերահաշվարկները կատարվում են համապատասխանաբար նույն հոդվածի 3-ր կետով սահմանված ձևով:

19. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19.1. Յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի համար, սկսած 1999 թվականի ապրիլ ամսից, օրենքով սահմանված հաստատագրման ենթակա ոլորտներում գործունեություն իրականացնողների հաստատագրված վճարի ամսական չափերը ավելացվում են տոկոսային արտահայտությամբ նախորդ տարվա ընթացքում արձանագրված սպառողական գների ինդեքսի փաստացի աճի մեծության ամբողջ թվի չափով (տես սույն հրահանգի հաստատագրված վճարների ամսական չափի հաշվարկման բանաձևերում կիրառվող «Ա» արտադրիչը (ինդեքսը)): Այդ ինդեքսը կիրառվում է նաև օրենքի 22 հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով, 33 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով և 53 հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանային չափերի նկատմամբ՝ համապատասխան նշում (սահմանային չափի և սպառողական գների փաստացի աճի ինդեքսի արտադրյալի թվային մեծության արտահայտությունը՝ ամբողջ թվի ճշտությամբ) կատարելով հաստատագրված վճարների հաշվարկման ցուցանիշների սահմանային չափերի վերաբերյալ հայտարարությունների 1-ին տողում:

19.2. Օրենքի 7 հոդվածի «գ», «դ», «ժա», «ժբ», «ժգ», «ժդ», «ժե», «ժզ», «ժը» և «ժթ» ենթակետերով նախատեսված գործունեության տեսակներ (որոնց համար ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերը և դրանց թիվը չեն հանդիսանում ելակետային տվյալ) իրականացնողների հաստատագրված վճարի հաշվարկի դադարեցման (կասեցման) դեպքում, տվյալ ամսվա հաստատագրված վճարի չափը որոշվում է այդ ամսվա լրիվ օրերի և մինչև դադարեցումն (կասեցումն) ընկած օրացուցային օրերի թվի համամասնությամբ:

Գործունեությունը կասեցրած վճարողները, նույն ամսվա ընթացքում իրենց գործունեությունը վերսկսելիս, տվյալ ամսվա համար հաստատագրված վճարը հաշվարկում են լրիվ ամսվա հաշվով:

(19.2-րդ կետը փոփ. 02.05.02 N 02/578)

